Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Մատենադարանին

1966

ՍԻԳՐՈ՛ՆԻՈՍԻ

# ՀՈՑԻՈՍԻ

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒ՛ՆՔ

# ՍԻԳՐՈ՛ՆԻՈՍԻ

# ՀՈՇԻՈՍԻ

Ի ՉԱՐՉԱՐԱՆՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՋԱԽՋԱԽԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

Ի ՎԵՆԵ՛ՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1830

Ի 11 ՅՈՒԼԻՍԻ

958

ԱՌ ՕԾԵԱԼՆ

ՅԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

ԳԵՐԱԳԱՀ ՄԵՏՐԱՊՕԼԻՏ

ԵՒ ՊԵՏ

ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ

ՏԷՐ

ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆՈՒՐԻՃԱՆ

Ի ՎԵՆԵՏԿԵԱՆ

ՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԵԾԱՐԱՆԱՑ ԵՒ ԽՆԴՈՒԹԵԱՆ

ԱՆԵՂԾ ԱՐՁԱՆ

## ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

### ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ

Ուր նիրհեն Նորկինք առ ողորմ կական,
Զոր արտասուագոյն հեծէ լուռ բերան.
Շնորհեաց Արամայ ՀՈՎՈՒԱՊԵՏ ԱՐՀԻ,
Հովուել զոչխարակս 'ի վայր դալարի·
Եւ Սեբաստացւոյն ահա դօս ոսկերք
Թաղեցան 'ի շիրմին, լեզուն պարզի յերգ·
„Ողջամբ քո ծագումն, ԱՅՑԵԼՈՒԴ ազգիս,
Յոր առ կենդանեօք հեղի ես լալիս."
Յայս ձայն հայրենի՝ Որդիքն հարազատ
Դոփեն 'ի կայտառ յերգոց 'ի գըրուատ,
Իջ սըրտից զեղուած ու հոգւոց ցընդել
Ալ գարուց անջինջ յայս Արշան կանգնել·

Տե՛ս դու, ո՛վ մարդ, զի՛նչ վաղն քո կըրեմ յանձին,
Չիք ցաւ հանգէտ այնըմ որով ես չարչարիմ.
Գոչեմ առ քեզ, որ փոխանակ քո մեռանիմ,
Տե՛ս ըզպատիժ պատուհասից որով տանջիմ,
Տե՛ս ըզբեւեռ ոտից ձեռաց որով խոցիմ:
Թէպէտ այսչափ են դըժընդակք ցաւք սրտաքին,
Բայց դառնագոյն ես իմանամ ըզկոծ ներքին,
Յորժամ այսչափ ապախտաւոր 'ի քեզ հայիմ:

ՍՈՒՐԲ ԲԵՌՆԱՐԴՈՍ

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԱՌԱՋԻՆ

### ՍԷՐՆ ՅԱՂԹԱՆԱԿԷ

### ԱՍՏՈՒԾՈՅ

Ո՛ն ըզՍիրոյն ածիք զհանդէս
Քան զժամանակ երէց 'ի յէս ,
Եւ միշտ Էին 'ի դար անկէտ
Սա գոյակից անեղապէս ։

Թէ և ոչ ինչ գոյ զոյգ Էին ,
Բայց նա իշխէ տիրէ սըմին ․
Եւ հրամայէ բաղում անգամ
Որպէս նըկուն տեղ տալ նըմին ։

Նախ քան զերկիր զափըն ծովուն ,
Եւ քան զոլորտ երկնից շարժուն ,
Յորժամ ոչ ինչ կայր տիպ իրաց ,
Ոչ տիեզերք յիւրում զարդուն ,

Ասաց սրտմ Տէր տիրաբար,
Արամ զերկիր զաստեղաց պար.
'Ի նոյն աստեղք շողշողէին,
մեծազանգուած հող տարրանայր.

Անտի և այսր անշեղելի
Պայծառ եթեր զիւրև պատի,
'Ի մէջ օդոյն ինքնախարիսխ
Տնայ 'ի կախ գնդակ երկրի.

Ետես նա զազգ մահկանացուաց,
Ընկճեալ նրկուն 'ի պատրանաց
Եղեռնագործ բռնաւորին,
Կրել զանտար վիշտ կապանաց.

Եւ գունդագունդ յափշտակեալ
Որս 'ի գեհեան դահավիժեալ,
Եւ դառնաղէտ կոտորածոյն
Ոչ կատարած ոչ դիմակալ.

Տէր կարեկից զայս ոչ տարաւ,
Առ Բարձրելոյն բողոք կալաւ.
Դու ինքն, ասէ, քննախնդիր
Ըզգործ ձեռացդ առ ընդ բազկաւ.

Այս իւր պատուէր. անսայ Աստուած,
Եւ զիւր թողու գահ աստեղաց.
Եւ իջանէ յօժարափոյթ
'Ի մեր երկիր օտարագնաց.

Վայելչութիւն մեծ այսպիսի
Օգեցաւ մարմին մահկանացուի ,
Եւ յանձն էառ խոնարհաբար
Լինել ծընունդ մօր աղքատի ·

Ոչ ամաչեաց ըղձիւ բառնալ
Յանբանից լուր առ իւր կայեալ ,
Ոչ ամաչեաց և ընկողմնիլ
Յանարգ մըսրոյն ծըղօտ բարդեալ ·

Ո՛վ ոչ գիտէ զօրհաս անտար
Կըրեալ ՚ի փայտ դառնաչարչար ·
Ո՛վ ոչ գիտէ զանյաղթն Աստուած
Յաղթեալ մահուամբ ըստըրկաբար ·

Սէր հրամայեաց զայս ամենայն ,
Սա տայ երկնից ըզպատուիրան ·
Լոչ փոքր ունի արքայութիւն ,
Քան զայն որում բընաւք անսան ·

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՐՈՐԴ

### 'Ի ՄՇՏԱԲՈՐԲՈՔ ԵՒ ՅԱՆԲԱՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌ 'Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ

Լծեալ դու Սէր կառս յաղթական,
Ա՛ծ ըղձարսիւք ոստ դափնիդեան.
Եւ 'ի վերայ անյաղթելւոյն
`Նըշա՛ն կանգնեա յաղթողական:

`Նոյն ինքն Աստուած քեզ ընկճեցաւ,
Բուռն հրամանաց հըլու գըտաւ.
Օ՝աչքսոր քան զիւր արքայութիւն
`Նախամեծար համարեցաւ:

Առ 'ի պահել զիւրըն գործած
Ամենայնի համբեր ժուժեաց.
Այլ և ըզմեզ զորդիս մահու
Գին մեծ վարկաւ իւրոյ կենաց:

Ո՛վ գութ անձառ. որչափ լուցկի
Նա բորբոքեաց յիւրում սրտի.
Քանիցս անգամ փափաք մահուան
Եղև ՚ի նմա և որպիսի։

Ձեզ ոչ այնպէս յոգւոց հանէ
Եւ արձակուրդ արգահատէ,
Զոր կաշկանդեալ արգելարան
՚Ի խիստ գելոց պարաւանդէ,

Եւ ոչ այնպէս արտասահման
Յափրն լըլկեալ ՚ի սարմատեան,
Ընձկայ ՚ի հնար վերադարձի
՚Ի հայրենեանըն վառարան,

Որպէս ինքնին նա վառեցաւ,
Սիրով վըշտաց կաթոգնեցաւ,
Զերծուլ ըղձեղ յարժան մահուանց,
Իւրով մահուամբ անպարտակրաւ։

Այս էր փափաք չև երկնելոյն
Այս ՚ի ծննդեան ՚ի յայր մըսրոյն,
Եւ ՚ի վերայ խիստ ծըղօտի
Այս իւր փափաք ընկողմնելոյն։

Նա ձիչ բառնայր. կարծեաց իւր մայր
Բղցուրտ նըմին վընասաբար,
Կամ ըղփափկիկ ըղկող նորին
Շիթեալ խայթիւք յարդիցն ՚ի սայր.

Որպէս գիարդ ձեռընհաս է ,
Ի գլուխ զյարդ քընքշեալ հարթէ ·
Որպէս գիարդ նա ձեռընհաս ,
Պատըսպարեալ զցուրտ մեղմ ։

Զուր ջանաս , մայր գըթած և փոյթ ·
Եւ դու ցաւ՝ զոր լայ , առիթ ցաւոյդ ,
Քո մայրենի հոգողութեամբ
Ես անհընար բառնիլ յորդւոյդ ։

Ոչ այնչափ լայ քանզի վնասեն
Ծըղոտք և յարդք խայթոցաղէն ,
Այլ զի յաւէտ քան թէ ծըղոտք ,
Խիստ ձըմերունք զնա նեղէն ·

( Թէպէտ և լայ քանզի վնասեն
Ծըղոտք և յարդք խայթոցաղէն ,
Այլ զի յաւէտ քան թէ ծըղոտք ,
Խիստ ձըմերունք զնա նեղէն · )

Որչափ զի խոշ է սիրողին
Պահ անապան ժամանակին ·
Այս տեսանէ այսչափ յիւրմէ
Պուլբացական զօրըն վերջին ։

Եթէ օրէն այժմէն ձաղկիլ ,
Եւ այժմէն խոցիւք վիրաւորիլ ,
Եւ այժմէն ցանկայ բարձր 'ի գերան
Զխուրըն բաղկին տալ բևեռիլ ։

Նոյն իսկ խաչին յապաղութիւն,
Ծանըր տանջանք քան խաչ ողջոյն.
Ըզսա մահուկն ունի պատճառ,
Յոր սակըս լայ պատճառ է սոյն։

Աճեաց 'ի տիս, նոյնպէս աճեաց
Օյգ և բորբոք չարչարանաց.
Որով արգէն 'ի հօր հիւսան
Ձեռն արկանէ դըժուար գործած։

Իմէ. յորժամ միայնակ էր
Նա զհիւսնական գործիս գիտէր,
Քանիցս անգամ այսպէս բարբառ
Խանդաղակաթ նա արձակէր.

„ Ահա հեղույք աճա կըռան,
Փայտք խոտորնակք և բուռն գերան.
Կամակատար բազուկ պարզեմք,
Ո՞ւր ես դահիճ իմ խաչահան։ "

Այսպէս ասէ, և առ նըմին
Իզմերկ բազուկ զիրան մարմնին
Ձըգտէ 'ի բուռն խանդաղակաթ,
Նա պատրաստէ առ խոց վիրին։

Կայր ինչ բըլուր՝ որոյ կատար
Խիտ ձիթենեօք հովանանայր,
Ոչ ինչ հեռի, ո՛վ դու Սաղիմ,
'Ի պարըսպաց քոյ բարձրածայր։

Անդ էր սիրոյ յաճախակի
  Հեղուլ զմարմին իւր 'ի գետնի ·
  Անդ ըղձիչէր առհասարակ
  Յաղօթս հանէր արտասուալի ·

Համբոյրըս բիւր մատուցանէր
  Այնըմ հողոյ յոր ընդգըրկէր ·
  Օ՜ ի առաջին կայլակ արեան
  Անդր յերակաց հոսելոց էր ·

Յաղօթըս իւր ասաց յոլով,
  „ Ե՞րբ ներկեցից արեամբ իմով
  Ըզքեզ ըղձողդ որ արդ թացեալ
  Ոռոգանիս լալեօք իմով · ”

Բազում անգամ և ողջոյն տայ
  Երբ պահ ընդ պահ 'ի քաղաք գայ ,
  Յարկաց և տանց հանդերձելոց
  Լինել իւրոց ցաւոց վըկայ ·

Ելանէ նա երբեմն 'ի յայց
  Ճանապարհին արեամբ ներկած ,
  Յոր ըղկընի բազում անգամ
  Խոնջ ընդ խաչին երթևեկեալ ·

Եւ այն ինչ նա ըզլեառն ետես
  Ըզպարտութեան մահուն կըրկէս ,
  Յորում եդ Տէր վըշտաց և իւր
  Կէտ աւարտման վերջին հանդէս ·

Ո՜նց էր յայնժամ քեզ տեսանել,
Զաչըս զերես բոցափայլել,
Եւ ապաժոյժ ըղձիրտ նորա
Զխուրդ բոցոյն ըղձլաւ ճռնչել.

Մատչին սոքա յանուրջս անգամ,
Զբաղէն ըղքուն գիշերական.
Չարչարանաց շարք գըլխովին
Կարգ ըստ կարգի գան յանգիման.

Ո՜յլ և յայնժամ ըստէպ նըմին
Թուէր ըղձաստ պարզել տուին,
Զողն 'ի մըտրակ ըղձլուխ 'ի փուշ,
Ըզպարանոց 'ի յեց խաւին.

Եւ կարկառէ զխուրըն դաստակ
Ունել ըղփայտ սին անգոյակ.
Որպէս եթէ կայր առաջի
Ընդ ժանտ ամբոխ խաչ դըժընդակ.

Տենա երբեմն և երևի,
Որպէս եթէ 'ի վայր հակի
Գլըլուխ նորա ոգէսպառեալ
Եւրբ պարանոց լուծեալ թօշնի.

Տեղի սայ քուն առ. 'ի նմանէ,
Ո՜յլուշ պատկեր զապագայէ.
Զայս որոճայ 'ի խորհըրդեան,
Զայս անպակաս յարաձըգէ.

Յառնէ 'ի վեր և կաթոգին
Յոգւոց հանէ խորոց սրտին.
„ Զոր ինչ, ասէ, ունիմ կըրել,
Այժմէն պատրաստ եմ առ նոսին.

Խաղաս Սէր դու. վեհխ յաղթես,
Եւ դաւանել զիս ըստիպես,
Ազատութիւն մեր աստուածեան
Գոլ քան ըզքոյն փոքըր գոգցես.

Կարող եմ ես հողմոց սաստել
Որք 'ի ծովուն գան ողորել.
Եւ ըզվահրոտ ըղհարաւոյն
Ըզշառաչիւն ըմբերանել.

Յորժամ հաճոյ ինձ թուեցան,
'Ի լոյս կենաց շաղիղք դարձան.
Եւ մահ և կեանք ծառայապէս
Խոնում անսան ակնարկութեան.

Կարող եմ ես 'ի յօտարաց
Զամենայն ցաւ առնել 'ի բաց.
Այլ զիմ բառնալ եմ անկարող,
Քո ինձ եղեալ խափան ձեռաց.

Ոչ անարժան ես համարիմ,
Պարտեալ 'ի քէն՝ տեղ տալ ինքնին,
Եւ զիմ բազուկ կալանաւոր,
Տալ մըտադիւր տառանց քոյին.

Ո՛ւր ինձ յաղթողդ էր յապաղես ,
Ըզխոց վիրաց հի՞մ ոչ ածես .
Զի՞ տակաւին ինձ զանուշակ
Բեռըն խաչին ու ըստանձնես .

Վայե՞լ արդեօք և կամ վաւե՞ր ,
Քեզ ըզքոյին յամել պատուէր .
Զի՞ զոր կըրել հրամայես դու ,
Խափան լինիս առնուլ ըզվէր .

Կա՛մ չէր արժան զիս ըստիպել ,
Կա՛մ զյօժարեալն 'ի հնազանդել
Թողուլ կամաց և տէրութեանդ ,
Ըզհետ երթալ և կատարել .

Զի ինձ աւուրց անսալ մընայ ,
Եւ զի կարգեալ ժամ մերձենայ .
Ո՜ն 'ի բաց տար ըզյամրութիւն ,
Սէր անդանդաղ ըզնոյն ատեայ .

Բա՛բէ , ընդէ՞ր հանդարտընթաց
Իմ այսպիսի հասակ կենաց .
Բա՛բէ , ընդէ՞ր ոչ ժամանէ
Քան զամըս իւր կանխեալ յընթաց .

Անկա՛րծ թէ Հայր՝ ամոց թողըր
Գընալ ըշտապ արշաւասոյր ,
Եւ փութաքայլ ժամուց տունջեան
Թեւակոխել քան զոր սովոր .

Երթայք աւուրք երթայք և ժամք ,
Ճե՛պ տուք թըռչել դուք անտարտամք ·
Եւ զանախորժ դանդաղութիւն
Ինձ գըլեցէք 'ի բայց տարայք ․

Ո՛չ թէ քանի ախորժական
Կեցի քո եկ թէ և դաժան ․
Ե՞րբ եկեսցես , ժամըդ վերջին ,
Իմոց կենաց կէտ աւարտման ․

Թէպէտ այնչափ ցաւս երկնեսցես
Որչափ վայրկեան 'ի քեզ փակես ,
Բայց կամէի յայսըմ ժամու
Յորում խօսիմ՝ զի եկեսցես ։

Ո՛հ · փութասջիր , և ընդ քեզ ած
Զամենայն ազգ չարչարանաց ·
Չարչարանաց ինձ դիւր միայն
Եղիցի կիրք չարչարանաց ․

Զի փութասցիս և ընթասցիս
Վաղ քան զընթաց որում բերիս ,
Ժամդ անագան , էկ և կանխեա
Բան ըղձափափաք տարփացողիս ։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐՐՈՐԴ

ԱՊԱԳԱՅ ՉԱՐՉԱՐԱՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԵՆ ՆՄԱ

ՄԻՇՏ ԱՌԱՋԻԿԱՅ ՑԱՒՈՑՆ ՊԱՏՃԱՌՔ

Փրկիչդ Յիսուս, զի՞ գանգատիս
Ընդ գանգաղկոտ ամս և ընդ տիս.
Զի՞ գանգատես թէ յամրաքայլք
Եմիք աւուրք՝ զոր ոչ կամիս.

Նա որպէս թէ արդ ոչ կրէս
Ի զկատաղանս՝ այնպէս հեծես,
Որովք յապայս անդութ Սաղէմ
Խանտասցի քեզ գազանապէս.

՚Ի քոց լռեալ գանգատանաց.
Քեզ վկայք եղէն չարչարանաց
Որ ինչ մասունք կենաց անցին,
Յորմէ հետէ քեզ այն ծագեաց.

Հեցցէ՛ լռով քո այդ պապակ
Սրով տապխ եբր 'ի խորշակ .
'Ի մէջ գետոց առատահոս
Ընդէ՛ր ջրոց լինիս խընդրակ .

Թէ չէք յանձնեդ թողուլ համբուն
Բայց թէ մահուամբ ըղձենչ մահուն ,
Երկար ուրեմն այդ յապաղանք
Ես քոց ըղձից աջողագոյն .

Այդ յապաղանք քեզ տանջանք է ,
Դա 'ի մահուանս ըղձմաց բարդէ .
Դա արդ առնէ զոր ինձ յապայս
Ամբոխ դըժնեայ քեզ արասցէ .

Թո՛յլ ինձ արա և զայս ասել .
Այդ ոչ բընաւ է յապաղել .
Ո՛չ կանխէ դա քան ըղձահձաց
Այլ կատաղի՝ դիպես տանջել .

Թէ չև կըրես տուրն զուլամբ
Եւ ըղձըղթայս ըղձքո ձեռամբ ,
Եւ ոչ պըսակ տատասկահիւս
Պատառոտիչ 'ի սուրբ կառափ ,

Թէ չև հանդերձք պատմուճանին ,
Այդ 'ի մարմնոյդ տեռազերծին ,
Եւ ոչ արեամբ քո ճապաղեօք
Բոսորանայ ըսփիւռ գետին ,

Թէ ոչ հընչէն լոյսք դըժընդակք
  Ընդ ձաղկ զոր տան կարկամ մըտրակք ,
  Եւ թէ ոչ խաչ ամբառնալի
  Ըզքեզ ունի կախ վերելեալ ,

Բայց քեզ ածեն զայս ամենայն
  Միտք ոչ անգէտ զանցս ապագայն ,
  Եւ զոյգ նըմին Մէր կաթողին
  Պատճառք այսչափ վըշտակրութեան ։

Նա տեսանէ յոր ինչ լըրբի
  Կատաղութիւն և ոխ սըրտի .
  Զոր տեսանէն՝ 'ի սիրտ կըրէր ,
  Եւ ոչ ինչ ցաւ հեռի առնի ։

Այժմըն 'ի սա դըժնեանայ ,
  Թէպէտ յանդամ ոչ վէր բանայ
  Անգութ դահճաց գազանութիւն ,
  Եւ կարեվէր խոցիւք խաղայ ։

Այս մատնութիւն՝ բանք սուտ երդմանց
  Ինքնանըզով քոց ընտանեաց .
  Հաւատ նոցին թեթևագոյն
  Քան ըզխըռլիւ գօս անտառաց ։

Այս են տառունք բազմակուղեան ,
  Կարք երկաթիք շըռընչաձայն ,
  Եւ տէգ հարեալ յիւրում տեղւոջ ,
  Յորում հարցի 'ի յապագայն ։

Աստ միշտ ունիս դաշտաց վոհմակ,
Աստ ըղձեղոյս՝ խաչ դժընդակ.
Նոյն և ըղձեր բարդեալ վիրօք
Որ զքեզ յօշեն առ հասարակ.

Աստ առընթեր կայ նա և Մայր,
Հայի 'ի խաչ՝ դէմք դալկահար.
Նա որչափ վէրս 'ի քեզ դիտէ,
Նոյնչափ յինքեան Սերըն եհար.

Աստէն ընդ քեզ միահաղոյն
Ճըմլեալ 'ի սուգ յաղէտ անհուն,
Արբէ մահունս բիւրապատիկ,
Նախ քան ըզմահ՝ և դառնագոյն.

Օ՜ ի՞նչ ծանրագոյն զի՞նչ դու կրեսցես
Նորբ առ 'ի մահ 'ի կախ կացցես.
Օ՜ ի՞նչ ծանրագոյն քան զայդոսիկ
Նորբ մահ 'ի փայտ Ճաշակեսցես.

Բա՛րբէ, քանի թեթևագին
Փուշ և խըլթանք քեզ եղիցին.
Նա խաչ և ցաւ՝ խոցուածք վիրաց,
Օ՜ որ սուր երկաթք տացեն մարմնին,

Նա ոչ 'ի քէն մեկուսանայ,
Այլ անփախուստ նըպատակ կայ,
Միշտ ակներև այսչափ ցաւոց
Նղերական պատկեր դըժնեայ:

Տոչորէ սա եթէ փութաս
Վարդապետել'ի յարտորայս.
Տոչորէ սա թէ յամայիս,
Եւ է 'ի սենեակ առանձնանաս.

Զոր օրինակ շուտ եղջերու
Բաղցր 'ի մայրիս Լիբանանու,
Զոյր անըզգոյշ ըղօրնակուշտ
Հար 'ի բացուստ նետ մահացու,

Եւ ընդ մարմանդ թէ ընդ Ճարակ
Սաղրս առնու 'ի կուշտ սըլաք,
Եւ փախըստեայ զիւրըն մեղմ
Պասուք աղեաց 'ի ջինջ վըտակ,

'Ի զուր խընդրէ անձին սատար,
Ընխեալ է խոր նետ մահարար
Յիւր ըրնակուշտ արիւնաթոր.
Մահն է միայն ցաւոց կատար.

Այսպէս և դու կենդանի ես,
Մահ դառնութեան անդուլ կըրես.
Նա ամենայն քոց աղետից
Մահըն միակ վերջ տայ նոյնպէս.

Յայսըմ պահու խաչն է միայն
Տընկեալ'ի սիրտդ և իղձք տարփման.
Նա զայս կոչես տիւ և գիշեր,
Որպէս եթէ դոյր բացական.



958
ՖՈՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Տանջէն ըզքեզ անուրջք 'ի քուն ,
Ըստոյգ վըշտաց յար և հանգոյն ,
Իոչ մի գիշեր քեզ դիւրատար ,
Նա քան ըզտիւ դաժանագոյն :

Առ ինչ ապա քեզ երևին
Այսչափ վըշտաց ըստանձնողին ,
Թէ ժամանակք քոյ տանջանաց
Հանդարտաքայլ առ քեզ բերին :

Իղձ սիրողիդ է նոր հանդէս ,
Որ ինչ մօտ է՝ զայն թախանձես .
Եւ առ 'ի կրել՝ հընար ցանկաս ,
Զոր ինչ ըզվէր արդէն կըրես :

Անգիտանամ զինչ խորհեցայց .
Իղձք քո ներհակք քոյ ըղձանաց .
Ո՞չ արդեօք Սէր նա և ըզքեզ ,
Անձին առնէ ուշամոռաց :

Զոր ինչ ժըտես՝ այն ընդ քեզ է ,
Ոչ ըզսիրողդ՝ խաչ լըքանէ .
Եւ ոչ յառաջ քան զօր վերջին
Մահաբերն այն ըզքեզ լըքցէ :

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԶՈՐՐՈՐԴ

'Ի ՔՐԻՍՏՈՍ ՍԱՍՏԿԱԳՈՅՆ ԵՂԵՆ
ԵՒ ՑԱՒԱՏԵՒ ՄՏԱՑ ՎՇՏԱԿՐՈՒԹԻՒՆՔ ՔԱՆ
ԶՄԱՐՄՆՈՅՆ

Ըամբէ. յանդէպ տըգէտ ռամիկ
Ոչ ինչ կարծէ լինել սաստիկ
Քան ըզսուսեր և քան ըզհուր
Քան զաջ զանձին ըռնամարտիկ ։

Մեծագոյն մասն է տանջանաց
Զոր նախ կըրէն միտք խրազգաց ,
Եւ մատուցեալ տակաւ մարմնոյն
Ըզգայապէս 'ի փորձ խրաց ։

Երբ 'ի յերկաթ երբ 'ի կըրակ ,
Եւ երբ հեռուստ հայի դէտակ
Յամէն գործիս դաժան մահուն
Դաժանութեան յազգ յազգ տեսակ .

Երբ յայնպիսեաց ոչ ինչ ծածկի
Եւ 'ի տըխուր պատկեր յառի,
Նա 'ի յանձին կըրէ արդէն
Որչափ ինչ ցաւ տանջանքն ունի։

Դառն է մըտաց ըզգայութիւն
Ըստ նիւթական մերըս մարմնոյն.
Սա երբ ըզգայ, և նըւաղի.
Նորայն մընայ միշտ հաստատուն։

Օ՜ ի՞նչ ցաւ ըզգաց որ գըլորեցաւ
Յանկարծածիգ հարեալ փըքնաւ,
Եւ օրհասին տարաժամու
Յառաջագոյն անգիտացաւ։

Օ՜ ի՞նչ ցաւ ըզգաց զոր յանդորրու
Եւ յօրացեալ 'ի քուն քաղցու,
'Ի փետրալից առագաստէն
Մա՛հըն խըլեաց յանկարծ պահու։

Ո՛վ դուք բըլուրք Գեթսեմանեայ,
Դու գահաւանդ ո՛վ Գողգոթայ,
Դու հող գետնոյդ՝ որ արբեցիր
Աստուածական արեամբ նորա,

Պալատք Պետայ քահանայից
Եւ մեծ Պրետորք Լատին դընդից,
Եւ դու՛ երկին՝ որ ունիս տալ
Ըստ մորմոքման ցոյց կարեկից,

Նաւ համագոյ բնութիւն իրաց
Որ երաւամբք լցիս ցաւած ,
Բա՛րբէ , ո՛րքան մամն 'ի ցաւոց
Ծանօթացի ձեզ յամբաւաց ․

Ու ծովք ունին ալիս այնչափ ,
Նաւ ոչ ափունք աւազ այնչափ ,
Նաւ ոչ 'ի գաւ գարնան նորոյ
Հողըն տամուկ՝ ըզսեզ այնչափ ,

Որչափ ըղքև Հօր Միածին
Յաւք յամենուստ խուժեալ պատին .
Դու միայնակ զորըս կըրես ,
Դու համարոյ գիտակ նոցին ․

Յամենատես աչացըդ քոյ
Ու թաքչի կէտ հանդերձելոյ .
Բա՛րբէ . սարսափ նախաժաման
Բա՛նի տագնապ ունի ցաւոյ ․

Այսպէս ըղքեղ ձըգձըգեսցեն ,
Այսպէս հարցեն և պըրկեսցեն .
Այսպէս սոքա այնպէս նոքա
Մէրըս այսչափ ըղքև դիցեն ․

Այսպէս հարցեն 'ի գագաթան ;
Տատասկ այսչափ և խոր այսքան .
Այս եղիցին բանք իշխանաց ,
Այս ամբոխին մոլեգնական .

Այսպէս ըստուար սայլք հեղուսաց
Հերձցեն ըղթաթ զոտից ձեռաց ,
Այսպէս նիզակ մըխեալ՚ի կող
Ընդ սիրտըն շեշտ անցցէ թափանց ․

Արդ այսպիսեօք սայլովք բազմօք
Մխոք սիրողիդ կոծին հոգօք ,
Որպէս պարէխ զոր երրադարձ
Ծովըն ծեծէ անդուլ ալեօք ․

Զըմեռնաշունչ բարկ մըրըրկին
Գայ յաջորդէ սուգ քաղցրագին
Այլ դառնագոյն քոյ մըրըրկաց
Ոչ երևի սուգ ինչ հեշտին ․

Եւ նոյն իսկ օր և ժամանակ ,
Որո՞ց ցաւոց ոչ է ճարակ ․
Նոյն ինքըն յոյս և ցաւ համբուն
Թեթև գործէ զհոգ դըժընդակ ․

Բայց քեզ ոչ ինչ վիշտըս բառնայ
Այս ժամանակ սուր փախըստեայ ․
Եւ ոչ քեզ յոյս դիւրահաւան
Մատուցանէ շահ դուզնաքեայ ․

Եւ ոչ իսկ քո այդ ցաւ սըրտի
Յանձն իւր մաշեալ և ըսպառի ․
Եւ ոչ երբէք լալեօք իւրովք
Յագուրդ առնու ՚ի դուրս թափի ․

Սուգ և թախիծ մեր սըրտահար
  Բիւր գըտանէ իւր մխիթար.
  Իսկ քոց վըշտաց և աղետից,
  Մահըն միայն դեղ և հընար։

Թէպէտ և միտք զօրաւոր է
  Ըզհոգ տըխուր քեցել յանձնէ,
  Բայց մըտադիւր 'ի վիշտըս իւր,
  Ընձամբ անձին զինքըն պահէ.

Նա որ կարէն նա իւրովի
  Զանձըն սփոփել, բառնայ անտի.
  Նա ոչ յիւրմէ տըրտմութենէ
  Վըրէպ լինել նա յօժարի։

Ոչ հեշտ հանգիստ դիւրէ նըմին,
  Ոչ քաղցըր տիպ ապագային,
  Ոչ եկաւոր գիշերոյն մութ,
  Ոչ դարձաւոր լոյս ցերեկին,

Ոչ մայրենի գորով սիրոյն,
  Ոչ ընտանեաց իւր տեսութիւն.
  Ոչ հայրենեան վերին եթեր,
  Ոչ Հայր անգամ իւր համազգոյն.

Միածինդ Հօր, զի՞նչ ասացից,
  Կամ զո՞ր պատճառ յառաջ բերից,
  Որով այսչափ տանել յերկար
  Կամս զայսչափ ցաւս աղետից։

Օ՜ լո՜ւռ այլ պատճառք, բայց փրկեսցես
Ի՛ զթըշնամիդ գըգուիչ այսպէս.
Եւ զի գըգուեալ առ 'ի նմանէ
Հաշտարարի ըզգէնս առցես.

Եւ ո՞վ բընաւ ոչ յաղթեսցի
Տեղի տուեալ սիրոյդ մեծի,
Եւ ժուժեսցէ անյիշատակ
Լինել ցաւոյդ անճառելի.

Ժուժէ սակայն և անտեսէ,
Ի՛ յլուր ըզսին խորհուրդ շըրջէ,
Ի՛նհոգացեալ զի՛նչ խանդ սիրոյդ
Եւ զի՛նչ այս վէրք նըշանակէ.

Ոչէք նըմին են բերկրական,
Վարի խուճապ յոր ձըգեն զայն
Այլ ցանկութիւն նոյն և զայրոյթ,
Եւ սեգութիւն՝ սէր նանրութեան.

Ո՛վ աղետիս. սիրտ մարդկեղէն
Չի՞ք չէք 'ի քեզ՝ չէք ապաքէն.
Եւ ոչ քո մայր որ ետ ըզշունչ,
'Նա 'ի մերմէ էր արենէն.

Սիրտ երկաթի, թէ ոչ ազգին
'Ի քեզ տատասկք ուշ վէրք նորին,
Ընդ որ և ժայռք և առապարք
Կարեկցեցան որպէս պատմին.

Սիրտ երկաթի, թէ ուղխք արեանց
Քեզ ոչ ձըրնչէն չիթ մի յաչաց.
Նա ոչ իւր սէր խանդաղագին
Ի ճապաղիս արեան առուաց.

Այս է ահա՝ որ տոչորէր
Քան ըզջայլոտ ըզսխրող մեր.
Այս է ահա՝ որ դառնագոյն
Քան ըզբեւեռ քան ըզխաչն էր.

Թըշուառացեալք կըշռեմք ըզցաւ
Ի մըտրակաց և տատասկաւ.
Բայց ոչ մըտրակք և ոչ տատասկք
Չէին նըմա ծայրագոյն ցաւ.

Ցաւք ծայրագոյնք էին նըմա
Ինքնակործան ազգըն դըժնեայ.
Նա այսպիսում սիրոյ պըտուղ,
Նա ոչ մի սէր՝ նըմին ընծայ.

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՀԻՆԳԵՐՈՐԴ

---

### ՍԷՐՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ 'Ի ՏԱՆՋԱՆՍ ԱՆԴ

ԱՆՑԱԳ

Ո՞ւ արդ ահա քեզ անագան
Ո՞կն եհաս , Րա՛նդ աստուածական ,
Տիւ բազմաբաղձ վերջին և տիւ
Սիրոյդ վըկայ անճառական :

Բղխոց վիրաց զոր դու ցայս վայր
Ս՝րտօք միայն 'ի քեզ տարար ,
Ր.րդ 'ի բոլոր իսկ 'ի մարմնի
Տանիս 'ի խոր դառնաչարչար :

Կըրես այժմիկ որ ինչ որչափ
Սովոր էիր ցանկալ անձամբ ,
Ո՞ւ ոչ մասն ինչ քոյոց ըղձից
Ո՞ւ'ի դերև , եհաս յիւր չափ :

Գոնեայ այժմուս զըԹոյդ գորով
’Ի ծայր ըղձմանն եհաս լիով.
Զունի կարծեմ մեծ ես հանդէս
Օ՜ իւր տալ զփորձ՝ ըննուլ զիւր սով։

Քըրտնեցար յորդ զարեան կայլակ,
Եւ արիւնոտ հոսեաց առուակ.
Երեսք և ծոցք և պարեգօտ
Եւ հող Թանայր կարմիր գունակ։

Գահիճք կարկամ տոռունս արկեալ
Պարանոցիդ աստուածարեալ,
Ընդ ժայռ խոժոռ ընդ խիստ շաւիղ
Ձըգձըգեցին ընդ քարշ բերեալ։

Օ՜ երծեալ ’ի քէն քոյդ պատմուճան
Ձաղկեցար դու այնչափ ըզգան,
Որչափ զանեն յորձանք ալեօք
Ըզծովափունս տիւրոսական։

Գոցէ և ոյժ առ ’ի հարուած,
Գոռ յաւելեր խոնջեալ բազկաց.
Օ՜ ի քո տանջանք լիցին հանդէտ
Խանտաժըռից փափաքանաց։

Օ՜ ինչ անդամոց քոյին պատկեր.
Ո՛չ հասարակ մի միայն վէր.
Բայց են զոգցես ոսկերոտիդ
’Ի մըտրակաց դըժոխըմբեր։

Փունջք մահակօք բըռնի հարեալ
Գընան Թափանց յուղեղդ օրհնեալ .
Զըսկաւառակ ողջոյն գըլխոյդ
Բազմահարուած պատառոտեալ ։

Ո՞ւր փախեաւ գոյն , ո՞ւր տիպ դիմաց ,
Ո՞ւր ճակատուդ այն գեղ շնորհաց ,
Ո՞ւր և փաղփուն ականողք
Քան ըզկաճառ քոց աստեղաց ։

Այդ կերպարան գեղադիտակ
Բազում զանիւք արդ կապուտակ .
Սորեալ են աչք աստղանըշոյլ
Յարեան պալար 'ի կարմրորակ ։

Արեամբ մածեալ գէսք գագաթան
Զայտիւք դիմօք առկախեալ կան .
Չունի նըշմար տեսիլ բոլոր
Եւ զկանխատիպ չըքնաղ տեսլեան ։

Զի՞ է յիշել զանթիւ նախատ ,
Եւ զհայհոյիչ բան ապիրատ ,
Եւ զժանտաժուտ արձակ լեզուս
'Ի վարըս քոյ յախտից ազատ ։

Նա և 'ի լեառն ափափայից
Արեամբ ծըրդեալ մահապարտից ,
Յայսչափ պատժոց 'ի նըպատակ ,
Հարկ էր բերել խոնջեալ ոտից ։

Մօտ 'ի կատար ըղխաչ դըժնեայ ,
  Մըգ դըժնագոյն և անոպայ
  Բըռնադատեաց , թէ և ցեռեալ ,
  Հանել 'ի վեր յուսոյդ վերայ :

Ո՛վ թէ քանի՜ 'ի խոր մըխեաց
  'Ի քո սընար զայր տատասկաց
  Բևեռն այսպիսի դըժոխակիր ,
  Յորժամ ցընցէր զանըրակ ուլանց :

Քանի՜ցս անգամ , աղի՜ք գելուն ,
  Ընդ գերանաւ տեսար նըկուն ,
  Եւ ըզգետնի ընդ հարկանել
  Մնտիպ գիմօք պատառատուն :

Քանի՜ցս անգամ , սի՜րտք գելանի՜ն ,
  Զօղն անկելոյդ խըլթանեցի՜ն ,
  Ըզքո մնակուշտ նոյն և ըզգլուխ
  Ի խայթոցիւք ժանտ դըժնըկի՜ն :

Դեռ անըսպի էին ներբանք ,
  Եւ ոչ ձեղքեալք գանք և հարանք .
  Փոխան կարձաց խարազանից
  Եղեն պարեխք և սուր արձանք :

Երբ վարոցօք դու խըլթանիս ,
  Յայսկոյս յայնկոյս երբ ծըգծըգիս ,
  Եւ ընդ դըժուարս առապարաց
  Երբ ընթանալ բըռնաբարիս ,

Զերկաքանչիւր քո գարշապար
Հերձոտեցին վէմք սըրածայր ,
Զի մի մասն ինչ 'ի սուրբ մարմնոյդ
Լինէր անվէր անխայծ մընայր ․

'Ի վախճանի վերելակեալ
'Ի Կառափման սար սեպացեալ ,
Գոգցես 'ի սպառ տեղի ետուն
Եւ կեանք և շունչ յանձըն վըտտեալ ․

Չարչարիս դու զայս ամենայն ,
Դեռ չարչարիլ իղձք ոչ լըցան ․
Եւ ու՛ր արդեօք 'ի վախճանի
Սերըն տուցէ կէտ դադարման ․

Գամ մի հայեաց թէ զո՛ փըրկես ,
Քըննեամ ըզգին զոր ընծեռես ,
Չեմք հողածինքս այսչափ արդոյ
Եւ ոչ բոլոր երկրիս երես ․

Թէ վըճարել ախորժեցեր
Զգին վաճառոյդ քան զոր արժէր ,
Շատ էր արդեօք և աւելի ,
Շիթ մի արեան զոր թափեցեր ․

Արդ ամենայնք կապուտակին ,
Արդ վէր արիւն հանուր մասին ․
Բարէ , անչափ և անխընայ
Ծախ վատնեցեր ըզքո անձին ․

Գանեայ եթէ առ սէրդ անհատ,
Մատչէր շնորհ թէ և անքատ,
Ոչ գըլխովն արդարացի
Գերաշխարան ողբ և գանգատ։

Բայց ո՞ւմ արդեօք քո սուրբ արիւն,
Ո՞ւմ փոյթ լիցէն խըլխայթք մարմնոյն,
Նա երանի՜ թէ այս լինէր
Գըլուխ աւարտ մեր ամօթոյն։

Բազում անգամ այսչափ բարեաց
Նոյն փոխադարձք նախատանաց,
Ո՜վ աղետից, հունձք անիրաւք
Մըշակողին տրուեալք քըրտանց։

Սակայն ըղձեղ սէրըն կիզու,
Պատրաստ 'ի տոկ քան զայդ ծանու
„ Ջամբիմք, ասես, չարչարանօք,
Նըւըսով սիրոյս յագուրդ չառնու։

Պատիժք զոր սէր զննէ ածէ,
Իմ միայնակ ըմփոփանք է.
Նյս ուղիք գետոց ըղձեր ծարաւ
Պատկանապէս շիջուցանէ։

Նոգըլթութիւն խըժգըժական
Յիս թափեսցէ զոյժ ամենայն.
Յամբաւութիւն վիրաց իմոց
Օշըլ յաւելցէ, տարայց համայն։

Դեռ չեն քամեալք ոսին երակք
Յիմոց արեանց առ հասարակ.
Ըզնըշխարեալ մասըն տակաւ
Թո՛ղ ձըմլեսցէ այս իմ մաղթանք.

Թո՛ղ մատուսցէ, զոր և առնէ,
Ձիր պաշտօնեայս սիրոյն դըժնէ.
Փոխան այսմիկ 'ի վարձ երկանց
Զաղօթըս մեր նա լըւիցէ.

Թողեալ մարմնոյս վէրք սըրբեսցեն
Ըզյանցաւորս որք զայն դընեն,
Եւ մեռըս մահ 'ի քաւութիւն
Լիցի մեղաց որոց գործեն:"

Այսպէս մեղմ սիրտըն գըթած
Զոր յանցանեմք առ նա յանցուած.
Եւ նոյն իսկ սէր խրախոյս առնու
Առ 'ի մերոց եղեռնութեանց:

Ըզցաւատեալ զանդամ մարմնոյն
Ըզհարուածեալ զիրան նորուն
Թողուն, այո, նեարդք ջըլատեալք,
Եւ կարթք կըթոտք զոտըս թողուն.

Այլ ոչ թողուն ոգիք սըրտին
Ինքնամատոյց դիմադրաւին
Ձուժել տանել չարակրութեանց
Բա՛ն զոր կըրեաց նա սաստկագին:

Որպէս հըրատ բարձրակուտակ
Նորովք լուցկեօք առնու ձարակ,
Նոյն ՚ի տարերց և ոչ մի նիւթ
Յաղթել նըմին է ընդունակ,

Սապէս նա զիւր հըրդեհ տածէ,
Նոյն նոր ցաւովք բազմապատկէ,
Նոյն որ զհամայն կըրէ յանձին,
Ոչ ինչ հերիք անձին կարծէ.

Յանկայ տանել բազմագունից
Քան զառաջին ծանրագունից,
Նոյն վաղահաս իւր խընդրելոյն
Լինին նորա անձուկք տենչից.

Խըժդըժութիւն և Սէր անվան
Հանդէտ ուժով դըժնեանան.
Նոյն զոխերիմ զիւրեանց բազուկ,
՚Ի մարտ զինեն բազմարկածեան.

Գոգցես միմեանց դաշնաւորեալ,
Ընդխտանեան ՚ի յագենալ,
Նոյն մոլեգին խըժդըժութիւն,
Նոյն Սէր կաթոտ յարիւն խանձեալ.

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ
## ՎԵՑԵՐՈՐԴ

---

'Ի ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐԿԱՑԵԱԼ ՑԵՏԻՆ

ԱՆԱՐԳԱՆՕՔ

Ո՜վ ինչ այլ կամիս, Սէրըդ դաժան,
Եւ երբ արդեօք հուսկ անագան
Վախճան դիցես վիրաց յոգունց
Դիցես վախճան և դըժնութեան.

Ահա կըրկին բանան երակք,
Ծորեն անդամք բոսոր վիժակ.
Ահա յարիւն և յապաժոյժ
Կըրկին կարմրին գետնոյն յատակք.

'Ի բաց կորզի ձորձ 'ի մարմնոյն,
Վէրք մակարդեալք կից են ձորձոյն.
Եւ ընդ քարշիլ բռնի 'ի բաց
Քարշէ առնու ըզխայծ մորթոյն.

Ընխայեօջիք , դաշնիճք , դիմու
Ըզտառապեալ մարմին քըշտել .
Եւ ինչ ունի ձեզ մասըն տալ
Բայց ըղցետեալ առ 'ի ցետել .

Սոսկան վերայ կըցեալ ըսպէք
Նու 'ի ձեռաց մեղկ և փափկիկ ,
Օ՜ն հապճեպով ձեռըն մըխեալ
Պատառոտէք դուք զայգոսիկ .

Ընդ օդ խօսիմք . նոքա զօրէն
Գարնանազայր ուղխից սորէն ,
Որք զամենայն ընդդիմակաց
Յանկարծ ալեօք տապալ ձըգեն .

Յամէն կողմանց արիւն ցայտէ
Նու յանդամոց 'ի դուրս վիժէ .
Որպէս զխարդ է ձեռընհաս ,
Ըզմերկ մարմնով քօղ արկանէ .

Եւ անհըման էր կերպարան
Իւր անդամոց ներկեալ յարեան ,
Նորբ զինուորաց կատաղութիւն
Խարազանօք խըզըրատեաց զայն .

Օ՜ ինչ ինչ կարաց արժանաւոր
Ընկղմանալ պատժոցըդ նոր ,
Այն որ ոչ ինչ վըճասապարտ ,
Ում վըկայեաց և դատաւոր .

Ահա դողայ առ 'ի ցըրտոյ
Մերկեալ բըռնի յարկանելոյ.
Եւ քան ըզվիշտ պատուհասիս
Ցաւ են նըմա կիրք ամօթոյ։

Ո՛վ դու Արփիդ, զոր 'ի վերջէ՝
Այժմն առջիր ըղձող յերկրէ.
Ըզքո հասանիչ նոյն և ըզքեզ
Նոյն և ըզտխուր քողով ծածկէ։

Գիտեմ առնես. այլ զոր կամիս
Պարածածկել 'ի խաւարիս,
Ո՛հ, քօղարկիլ ոչ կամի նա
Պաշտամամբ քոյին յոր յօժարիս։

Ոչ թէ մեղմել իւր պատուհաս,
Աճել ցանկայ նա անպակաս.
Յարգելուլ քո ըզճառագայթ,
Մեծ ինչ մասն այնց լինէր պակաս։

Ո՛վ դուք դահիճք, ո՞ւր այն գըրգլեալ
Թէպէտ կեղտոտ գըծծատեսակ,
Որով յառաջ երեսք նորին
Քօղարկեցան առ 'ի կատակ։

Աղտեղագոյն այն ցընցոտիք
Գէթ ծածկէին մասամբ իւիք
Ըզծըւատեալ մարմին նորա,
Եւ զժանտութեան ըղձեր կընիք։

Զխո՛րդ և է որկանելեօք
 Ծածկել հայցեմ զիւր անդամօք .
 'Ի մեծ պարգև համարեսցի
 Անարգ գըծուծ այն տառատոկ ։

Մի՛ անխայէք սիրտք կարծրագոյն
 Զայն ձորձ խոշոր մերկ ցետելոյն .
 Այլ հողմք առնուն զիմ բան նանիր ,
 Զայն անխայէն անագորոյն ։

Այսպէս ուրեմն այն որ զգեցոյց
 Մայրեաց տերև՝ կեղև ծառոյ ,
 Որ ըզգեցոյց դաշտաց ըզսեզ
 Չունի ըզգեստ իւր անդամոց ։

Այսպէս , ո՛ Հայր , քո Միածին
 Զանձն իւր ողջոյն և զոր անձին
 Մերկամարմին քեզ ձենձերէ ,
 Այսպէս զենու զանձն 'ի բաղին ։

## ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### ԵՕԹՆԵՐՈՐԴ

---

ՑԱՒՔ ԽԱՉԵՑԵԼՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օ՜ ինչ աստ յառաջ ես զարմացայց,
Օ՜ ինչ ցաւեցայց, զի՜նչ կոծեցայց.
Միտք իմ ափշեալ և յիմարին,
Նստ ուշաբարձ ցնդին 'ի բաց։

Կամ աստանօր կամ ոչ ուրեք
Բնաւ 'ի սէր են ցաւք երբէք,
Կամ աստանօր կամ ոչ այլուր
Օ՜ ինչ է սիրել՝ յայտնին երբէք։

Տեսէք տեսէք, սոսկամ հայել.
Ձեռս արկանեն յափըշտակել
Ըզմերկ մարմին սարսռեալ 'ի ցուրտ
'Ի փայտ խաչին տախտապարել։

Հերիք են, ա՛հ, դառն այդ տանջանք.
Զ՞ինչ այլ կազմէք, ազգ խըժականք.
Քա՛ն ըղձարեաց այդչափ մըրթեր
Իցե՞ն արդեօք գերաստիճանք,

Ո՞չ ինչ ըղձեց սորայս տիպար,
Ո՞չ ինչ մարմին պատառ պատառ
Ո՞չ ինչ ըղձեց ըմնաւ շարժեն
Փըշրովք ցետեալ գըլխոյն կատար.

Ո՞չ ինչ և խաչ 'ի լեառն հանեալ
Զ՛արիւնազանգ ուսովք բարձեալ,
Իւր ճանապարհ՝ զոր նոյն եհատ
Իւրով անմեղ արեամբ թացեալ,

Ո՞չ զօրացաւ վըտակ արեանց
Այնչափ անգամ յայնչափ վիրաց
Ո՞չ զօրացաւ փոքր 'ի շատէ
Ըղտապ մեղմել զարիւնախանձ.

Ոչ ինչ ազգէն բերել նահանջ
Այնչափ աղէտք լալահառաչ.
Յաճել նոցին աճէ զայրոյթ
Խանձեալ յարիւն խանձեալ 'ի տանջ.

Նա 'ի յորսայս անկեալ դըժնի,
Տայ սիրելւոյն համբոյր փայտի.
Իւր գիրկս արկեալ ձողին դըժնեայ,
Խանդաղակաթ զայն պինդ ունի.

Նա մինչ ունի՝ ասէ այսգոյն.
» Ո՛ղջ լեր իմ խաչ, իմ խընդութիւն,
Թէպէտ դըժնեայ թէպէտ և խիստ,
Բայց և այնպէս դու իմ սիրուն։

Մինչափ դու ինձ ակընկալի,
Որչափ ահեղ յանցաւորի։ »
Բազում ինչ այլ ըղձաբանել
Չետ թոյլ արտօսր և ջոկ դահճի։

Բըռնէն զանկեալն երես 'ի վայր,
Շըրջէն 'ի յողըն կըռփահար.
Նա զառ 'ի փայտ մածեալ բազուկ
Հանգուցաւոր կաշկանդէ լար։

Նա այսգունակ յերկուց կողմանց
Բըզէք ձըգտէն քընքուշ բազկաց.
Մոլեգնութիւն գազանային
Հաստաբազուկ օգնէ ձեռաց։

Ոսկերք խախտեալք 'ի յօդուածոց
Ճայթս արձակեն, չազդեն այլոց.
Գոգցես բազուկք կորզին բըռնի
'Ի յագուցիկ զօդից ուսոց։

Նա ոչ նըւաղ քակէն զյօդուած
Բարձից ծընգաց և զազդերաց,
Ցորժամ բըռամբ կոտըն պարզէն,
Ուս երկպատկէ զկորով բազկաց։

Ի՜նչ գինս ․ ո՛վ բաւական
Գառն արտասուաց դընել սահման ։
Ո՛ւմն որոտան սատարք չարին ,
Չունի զայրոյթ չափ և սահման ։

Կէպք ըղձըկտեալ բաղուկ նորին
Ըրկեալ պարան կաշկանդ ունին ․
Կէպք արիւնոտ վայրագ ձեռամբք
Ըզդըժընդակ չարժէն գործին ։

Մուրճ ծանրակիր յաջում խաղայ ,
Ունի աչեակ բևեռ դըժնեայ ․
( Հաստ էր բևեռն երկայն թըզաւ ,
Այր իւր ըրթեալ և անխընայ ։)

Տեսիլք դաշնաց՝ հրէշ ձառադեմ․
Յակն և յերես նըկարեալք են
Կատաղութիւն ուձիր անձառ ,
Զոր 'ի ներքս անդ՝ մըտաբերեն ։

Նշո՛ւկ զինս ․ ի՞բր ասացից ․
Հանեն զհեղոյս 'ի պատենից ,
Նու մոլեգին վարսեն թափով
Վարսեն 'ի ձեռս ու'ի թաթ ոտից ։

Խըզին երակք խըզին և նեարդք ,
Խըզին ոսկերք , խըզին և կարթք ․
Գընան աչա արեան առուք
Գետոյ հանգոյն , այլ սիրտք վիմարդք ։

Երբ խիստ ուռամբ կըրկնեն զհարուած
Երբ լեառն և վէմք կըրկնեն զարկուած,
Ռամբէ, քանի՜ ցաւք սըրտառուչ
Մինչ 'ի յուսկերս գընան Թափանց։

Որդիս մարդկան կոչեցից ես,
Յոր այսպիսի տըխուր հանդէս
Ով ինչ ըզսիրտ շարժէ բընաւ,
Որ և շարժէ ըզխիստ երեգ։

Որոյ աղէք պըղընձայնին,
Յորոյ 'ի սիրտ բոլք երկաթին,
Յանձըն Միրօղ զայս ամենայն
Անթաց աչօք թող հայեսցին։

Մինչ ես հայիմ զայս ամենայն,
Ոչ է և սիրտ իմ պողպատ դաժան։
Ռեկտի փըշրի ոչ հանդուրժէ,
Եւ թինդս առնու կարեկցութեան։

Ո՜վ աղետիս. Հա՜յր երկնաւոր
Հայի՜ս յորդիդ յանձնատուչոր.
Հայիս աչօք և կա՜ս լռիկ,
Եւ քո յամէ՜ շանթ պատժաւոր։

Ահա կանգնի խաչ բարձրացեալ,
Եւ ընդ խաչին մարմին կախեալ.
Եւ ծանրութիւն բոլոր բեռին
'Ի վէրսն հանդչէր վէրաբացմեալ։

Ըզկախ մարմին 'ի վեր ունին
Միայն բեւեռք ըստուարագին,
Եւ ծանրութեամբ բեւեռայեց
Խոր պատառուածք վիրաց անձին։

Տանջա՛նք դըժնեայ քըստմընելի.
Յայս տեսարան աղետալի
Թող կափուցէ զաչս իւր արեւ,
Մի՛ լոյս մի՛ հարկ տացէ երկրի։

Զի եւ նոյն իսկ եղեռնութեան
Թոյլ արարեալ վայր մի ցասման,
Քըստմընեսցի շարժեալ 'ի գեղջ
Ընդ լըրբութիւն աստուածասպան։

Յայսչափ աղէտ դառնաչարչար
Բարձեն նախատ՝ ժանտութեան ծայր.
Որպէս եթէ խաչ զըլխովին
Տանջանք էին թեթեւատար։

Ահա Աստուածդ ամենեցուն
Կախիս 'ի ձող տեսիլ նոցուն.
Մի՛ թէ փառացդ աստուածական
Արժանաւոր ա՞յդ լրբութիւն։

Փրկիչդ Յիսուս, զի՞նչ խորհիցիս
Յորժամ կըրես դու զայսպիսիս.
Անպարտակիր սիրտ քո ժուժա՞յ
Հաւասարել այդչափ կըրից։

Դու այսմ արդեօք մտօք անդորր
Որպէս այլոց տանիս բոլոր ,
Դու երեսօք վայելչական
Բնում ըղձանաց սիրատոչոր ․

Յայսքան տանջանս անբերելի
Ոչ հեծութիւն ոչ ձիկ լսի ․
Բամբէ , լուռ կայ ․ այսչափ ըզմեզ
Սիրէ սերտիւ , և ժոյժ ունի ․

Դու ժիլ տարցի սոցին բընաւ ,
Բայց դու միայն որում չիք բաւ
Համբերութեանն անպարագիր ,
Որպէս և ոչ ցաւոց զըրաւ ․

Արդ այս քոյին հանդիստ լիցէ
Խընդրեալ ըստէպ և 'ի սըրտէ ․
Որ և այնչափ քոց ըղձանաց
Յագուրդ և չափ ընծայեսցէ ․

Ա՞յս այն քաղցրիկ է դառնութիւն ,
Ախորժականն այս հեշտութիւն ,
Ա՞յս այն բերկրանք զոր ընդխառնէ
Սերըն յիւր վիշտ յիւր անձկութիւն ․

Առաջին լիղձ գիտեմ այլոց ,
Ոչ ինչ ըզգաւ կըրից ցաւոց ,
Դու վայելել յակընկալեալ
Բարօրութիւն յաջողուածոյ ․

Որք որսորդաց են բերկրալի ,
  Հասկք յուսացեալք երկրագործի .
  Անքոյթ ափունք , նաւավարաց ,
  Զօրագըլխին արմաւենի .

Քո իղձք տարփման են չարչարիլ ,
  Սփոփանք քոյին նեղիլ լըկիլ ,
  Եւ ծայրագոյն ուրախութիւն ,
  Զանագորոյն մահ մեռանիլ .

Քեզ խաչափայտ են հեշտութիւնք ,
  Հունձք յուսացեալք՝ վըշտակրութիւնք ,
  Եւ կեղեքանք նաւահանգիստ ,
  Արմաւենի՝ դառըն մահունք .

Լըռեա , Մուսա , ափ 'ի բերան .
  Ոչ ինչ է այն , լեր խոստովան ,
  Զոր ինչ մարթ է զայսքան սիրոյ
  Ասել երգել անձառական .

# ՆՎԱԳԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՈՒԹԵՐՈՐԴ

---

ԱՒԱԶԱԿՆ ՓՐԿԵԱԼ 'Ի ԽԱՉԻՆ ՕՐԻՆԱԿ
Է ՅՈՒՍՈՅ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Յուսայարուք որդիք մարդկան,
Յաստուածն էին է հաշտական.
Յաղթահարի, ոչ զոք մերժէ
Յանցաւորացն ոգեկործան.

Նա և որոց փաստ ոչ կայցէ,
Ողորմութիւն նորա մերձ է.
Ամենեցուն յամենայն ժամ
Դիւրամատոյց հեշտալուր է.

Մի՛ ոք 'ի վեղծ չարագործաց
Ինձ զամլութիւն բերցէ զամաց,
Մի՛ ոք ըղկեանս զանազանեալ
Մի՛ և ըղթիւ եղեռնութեանց.

Թող եղիցի համար նոցայն,
Որքան 'ի ծով ալիք ծըփան,
Որքան տերեւք 'ի յանտառի,
Որքան տարափ՝ բուք 'ի ձմերան ։

Մինայն 'ի զեղջ թող եկեսցէ,
Նոյն ինքըն ցաւ փաստաբանն է.
Խոչ անագան դառն արտասուաց
Նա երեւս ինչ դարձուցանէ ։

Տիպար լիցի մեզ Աւազակ,
Այր սա կախեալ բարձր 'ի գիտակ.
Իւր հեծութիւնք զոր արձակէր,
Ոգեւորի էին քըքուանք ։

Արտասուէր նա, և գալկահար
Ողընգեալ դիմօք առ տէր դառնայր.
Առնուլ արագ ըզթողութիւն
Լոկ այս միայն հերիքանայր ։

Բամբէ, որչափ ներգործեցին
Բանք և հառաչք աղերսարկուին.
Զուրախութիւն իմանալեաց
Վարձ և պարգեւ իւր ընդունին ։

Երջանիկ դու, թէ և կախեալ
Յանարգ հեծան նըշաւակեալ.
Որում այսչափ սուղ հեշտ վաստակ
Զաստեղս երկնից ետ ըստանալ ։

Զոր և անձամբ ես խոստովան,
Թէ և բիւրուց դոս պարտական,
Նաև մեռանիս մահ արժանի
Կենաց քոյին եղեռնական։

Բայց արդ զղջմանդ առհաւատչեայ
Առձեռն ունիս զանխաբեբայ,
Թէ ոչ պատրիմ, եանց այժմէն
Այդ դառնութիւն խայթդ դըժնեայ։

Այժմէն դահիճք այժմէն մատիք,
Ըզգարձս ոտից խորտակեսջիք.
Ոչ ինչ նըմա քան զայս պարգև
Դուք մեծագոյն ընծայեսջիք։

Այժմէն ցանկայ նորոց պատժոց,
Այժմէն ցանկայ նոր խոցուածոց,
Նաև յապաղանք միայն մահուն
Այժմէն նմա տանջանք ցաւոց։

Ո՛վ թէ, քանի ես անձկայի,
Բևեռապինդ մահ այդպիսի.
Ո՜ ինձ տացէ ըղձքոյդ կըրել
Զայս երջանիկ պարգև բարի։

Բայց քեզ առ ինչ երկբայութիւն
Խընդրել ներումն և հաշտութիւն,
Որ յանցուածոց և տանջանաց
Կախիս ընկեր միահաղոյն։

Այժմ հայցուածոց ժամ է յարմար ,
Նա խնդրողին տացէ յօժար ․
Որ արդ գնեաց մահուամբ իւրով ,
Զոր քեզ տացէ ձիր կամակար ։

Այլ նա , աւա՜ղ , դարձուցանէ
Զերեսս 'ի բաց առ 'ի նմանէ ․
Իսկ հայհոյէ ըղտէր տերանց ,
Զաստուածըն գոլ նըմին ժըխտէ ։

Իցէն արդեօք յորդիս մարդկան
Այսչափ անմիտք և մոլեկան ,
Զլանալ անձանց , աւա՜ղ , զինև ,
Զուարթառատ ըղձիր այսքան ։

Վասըն սիրոյդ , ո՜վ Միածին ,
Որով սիրես զամենեսին ,
Իսկ վասն յուսոյն զոր հրամայես
Ունել առ քեզ մեղաւորին ,

Վասն այսպիսի քոյին մահուան
Վասըն վիրաց բազմամասնեան ,
Որք 'ի բոլոր 'ի քում մարմնի
Դըրաւք սըրտիդ են խոկական ,

Այդ ինձ նըպաստ՝ զոր անօրէն
Խոտէ անձին անասնօրէն ,
Այդ ինձ հայցեմ , վիճակեսցի
Քո գըթութեամբ աստուածօրէն ։

Այսպէս ըզ քեզ թող ծանիցեն
Ազգ բանական սիրեալքն 'ի քէն,
Այսպէս ընկերս՝ որք վասն մեր
Գութն ըստիպեաց տանել աստէն.

Այսպէս առ քեզ հեզահամբոյր
Եւ 'ի ներել ինքնայորդոր,
Յոյսըն զերկչոտ հրաւիրեսցէ,
Եւ յանկուսցէ ըզյանցաւոր.

Քո գըթութիւն աստուածային,
Որ եղկելեաց շնորհէ զերկին
Ոչ ըսպառի և ոչ երբէք,
Ոչ աննըման լինի անձին.

Յոյս ոչ երբէք զոք լքանէ,
Անխտրաբար ում և իցէ
Անդուստ 'ի նոյն 'ի յաղբերաց
'Ի նոյն վիրաց ծագեալ բըխէ.

Հիմ երկուացայց անքաջալեր.
Զոր 'ի մահուանդ առաձայնեցեր
'Ի լուր յանցող Աւազակին,
Զայն ինձ գըրեմ թէ ասացեր.

Հերիք թէ զայս միում ասես.
Միովն յայտնեալ 'ի ցոյց ածես
Թէ որչափ յոյս ամենեցուն
Յանձին բերել քեզ փափաքես.

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԻՆՆԵՐՈՐԴ

'Ի ԹՇՆԱՄԱՆԱԴԻՐ ԱՅԳԱՆՕՂՍ ԽԱՉԵՑԵԼՈՅՆ

ԱՍՏՈՒԾՈՅ

Ո՛վ ժամդ Սաղիմ աստուածամարտ,
'Ի՛ան զյանցաւորս արիւնապարտ,
Զորս մատնես դու տանջանաց
Որոց գըտան արժանապարտ ։

Դո՛ւ հրամայես կախել զԱստուած
'Ի մէջ երկուց Աւազակաց,
Եւ մեռանել նովին մահու՝
Որով նոքայն ըստ օրինաց,

Զի կարծեսցի մեղաց կըցորդ,
Որ ըոկ պատժոյն է բաժանորդ ։
Այսպէս ըղձօ կըրկնես զոճիր
Յուցեալ ըղձեղ յայն անհաղորդ ։

Ա՛ղդ ամբարիշտ, արդ պարարեալ
Յողորմ արիւն զակըն գըժնեայ․
Թողջնին ահա կեանք կենսատուին,
Բամեալ 'ի սպառ արեան նորա։

Բայց արդ, ո՛վ ազգ աստուածասպան,
Գէթ լուեյս զլեզուդ զարժան․
Ատելութեան զի՞նչ այլ տեղի,
Ո՛չ ինչ այլ մնայ դըժնէութեան։

Կախել 'ի խաչ կամք ձեր էին,
Ահա կախի նա 'ի նըմին,
Մէրս անհամար կըրել անպարտ,
Ահա բազմաց տարաւ յանձին․

Իւ մահանալ ըզմահ յուշիկ,
Յուշիկ մահուամբ արդ ըսպանիք․
Արդ աղաչեմ, շատացարուք
Յայսչափ աղէտըս զոր ածիք։

Յայսչափ վըշտաց զի՞նչ պակասէր,
Բայց թէ մըտաց չիք խըրըն ձեր․
Այրըմ մասին 'ի սայր լեզուին
Պատառատիլ խոցիլ պարտ էր։

Խաբիս, ո՛վ ազգ մեղսահօղով,
Նա միշտ տանջանս մեծ և յոլով
Տարաւ մըտօք քան զոր բաւեաց,
Մըշտաչարչար տանել մարմնով։

Նշգո՛ւկ զինև . անդուլք են յայն .
Բոցք բարկութեան որում արժան
Տեսլեամբ արեան ցածնուլ մեղկիւ ,
Նովիմբ վառեալ վայրենաման .

Ձայնք ամբառնան խառնափնդոր ,
Ըղձնա որոշ լսէ բոլոր .
Իւրաքանչիւր բանք լուտանաց ,
Որովք կոծի, են թունաւոր .

Ոչ միտք բանին ոչ խօսողին
Ոչ զանխլանան, զինէ զնոսին .
Զինչ և սուրբ իմք նա ոչ կըրեաց
Տանջանարան կըսկըծագին .

Սէրըն աստի ըղմարտ դընէ ,
Ատելութիւն յայնըմ կասէ .
Պառնագոյն ինչ թէ կայ տակաւ ,
Յաւելջիք դուք, Սէրն յաղթեսցէ .

Բարձջիք ըղձայն աղաղակաւ ,
Խախանձեսջիք ժըպիրհ լեզուաւ ,
Զիւր ցուցանել զաստուածութիւն ,
Յայտ յանդիման զոր պանծացաւ ,

Զանձըն թափել ժանեաց մահուն ,
Եւ ձաղօպըել 'ի տես նոցուն
Ըղթաթ ձեռաց ըղթաթ ոտից
Հաստահեղոյս 'ի յերկաթոյն .

Աչ պինդ ունին բեւեռք ըստուարք
Զնա 'ի ձող խաչին անարգ.
Բայց զի մնայ անզերծ 'ի նմին
Բու մեր սիրտն մնայ անքակ.

Խոչ զոր խնդրէք, զանձն փրկէ,
Զամենեսին զի փրկեսցէ.
Զամենեսին կամի լինել
Փրկանք արեան զոր կայլակէ.

Յայս սակս ահա գոլով իշխան
Ջնջել ըղձեղ 'ի թարթ ական,
Երկայնամիտ ձեզ համբերէ
Ընտես եղեալ եղեռնութեան.

Յայս սակս ահա ծանր են նըմա
Քան զլուր կըտտանս՝ յանցանք դըժնեայ,
Որք զանգոսնեալ ըղձայրըն խուր.
Զարթուցանեն 'ի ձեր վերայ.

Դու մի անզօր համարեսջիք,
Թէ ոչ ըղձեղ պատժէ այժմիկ.
Զի հրամայէ ցասումն արդար
'Ի վրէժ քինուց մատչել յուշիկ.

Սովին ձեռամբ բեւեռամած
Բռնոյր ըզվրէժ ձեր յանցանաց.
Սովին ձեռամբ շանթս արձակէր,
Թէ էր նըմա հաճոյք կամաց.

Շա՛նթս արձակեր , գո՛րծ սոսկալի ·
Նա ոչ շանթեօք , հայցմամբք մըրցի ·
Կախեալ 'ի խաչ ձեր աղագաւ
Աղօթս առնէ աղերսալի ։

Եւ արտասուօք զորըս թօրէ ,
Ըզ հայր ընդ ձեզ 'ի հաշտ ածէ ·
Կատարութեան ձեր քաւութիւն
Զոր ոչ խնդրէք՝ ինքնին խնդրէ ։

Նա և զոճրոյն ըզծանրութիւն
Մեղմէ որչափ կարողութիւն ,
Եւ ըզմահուն իւրոյ նախանձ
Ինքնին առնէ թեթևագոյն ։

„ Հա՛յր թո՛ղ , ասէ , մի՛ ազգըն կոյր
Լուծցէ մահուամբ զարժանըն իւր ·
Ըժամանակից է յանցուածոց
Տըգիտութիւն աղետաւոր ։”

Զի՛նչ արասցես դու սիրողին ,
Այսպէս գըթածդ առ թըշնամին ,
Ո՛վ մոռացող քումըդ մեծի
Վայելչութեանդ աստուածային ։

Չարչարիս դու , բայց և այնպէս
Չարչարողաց ներումն հայցես ·
Նիւթ ներութեան և քաւութեան
Ըզմեր յանցանս առնել գիտես ։

Դու յանձն առնուս ըզպատուհաս,
Պատուհասից մեզ ըզվարձ տաս.
Եւ զի տացես՝ սակաւ թուի
Քեզ մահ դըժնեայ այսպիսահաս ։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՏԱՍՆԵՐՈՐԴ

### 'Ի ԳՐԵԱԼ ՏԱԽՏԱԿ ԽԱՉԻՆ

Եւ ա՛յս արդեօք պակաս մնայր
Կատականաց քոց 'ի համար,
Տախտակ գըրեալ եռալեզու,
Յառակ մահուդ և ծաղրարար.

Որում երկիր, որում երկին,
Որում և ծով պաշտօն տանին,
Եւ այս ամէն արքայութիւնք
Սուղ քան ըզքո են զարժանին,

Ի՛նըմ՝ որ ինչ բնութեամբ էիր՝
Մի՛ թէ արժան յայդըն փոխիլ,
Նոյն և պատճառք պատժոյդ եղեալ
Քեզ 'ի յանցուածըս համարիլ.

Զայս դատաւոր գըրեաց անուն ,
Իբրեւ ըստգիւտ մեծ քո փառուն ,
Եւ հրամայեաց լինել այնմիկ
Արդար պատճառք քոյոյ մահուն .

Բայց նա գըրեաց իրաւացի
Ըզքեզ անուամբ Թագաւորի .
Այլ ո՞ւր մեծն այն փայելչութիւն ,
Եւ ո՞ւր արդեօք շուք արքունի .

Մի՞ թէ գահոյք խաչըն յետին ,
Եւ ծիրանիք արիւնդ անձին .
Մի՞ թէ բեւեռք արժանաւոր
Ձոյլ գաւազան ձեռաց քոյին .

Եւ մի՞ արդեօք դահիճք դաժան
Ընդ սինլըքոր մոլի խուժան ,
Եւ երկոքին հուզկահարուք
Են թիկնապահք արքայական .

Հայհոյութիւնք ձայնք ողջունից ,
Եւ նախատինք բարբառք ծափից ,
Գանձք ճոխութեան աղքատութիւնն ,
Որ զքեզ կապտեաց 'ի յամենից .

Այս աւկախեալ մերկ 'ի մարմնոյ ,
Ծանակ փարսեալ 'ի բուն ձողոյ .
Այսպիսի՞ մեծ փայելչութիւն
Թագաւորի եւ Աստուծոյ .

Բայց, ով Սաղիմ, ինձ հաւատա,
Սա արքայից հզօր արքայ,
Զոր դարք նախկինք քեզ նըւագեն,
Թէ միւսանգամ ընդ ամպըս գայ·

Թող եղիցի դա պատժապարտ,
Եւ նախանձուդ զոհ մահապարտ·
Բայց պատժապարտ լիցի օր մի
Ձեր դատաւոր աշխարհադատ·

Քեզ ընծայեմք, փրկիչդ Աստուած,
Զարժանաւոր ուղերձ փառաց
Եւ առաջի քոյ աթոռոյ,
Յերեսս անկեալ գետնատարած·

Թէպէտ այժմէն այլագունեալ
'Ի մահուանէ կաս ըմբռնեալ,
Թէպէտ ոչ ինչ արքայօրէն
Ունիս 'ի քեզ 'ի խաչ կախեալ,

Բայց ոչ քո մեծ վայելչութիւն
'Ի սպառ ծածկեալ մընայ թաքուն·
Քան զի երկիր ծով և երկին
Տան նըշանակ իւրեանց սըգոյն·

Քան զի լուսին հեռաստանէ
Փութայ յընդդէմ երկնից մըրզէ
Եւ զքաջարշաւ նըժոյգըս իւր
Վարեալ ընդ կրունկ դարձուցանէ·

Այն զի երեսք արեւակին
Ծածկեն խուրև ըղտիւ զերկին,
Եւ զօրութիւն ակն յանդիման
Քում տէրութեան աստուածային.

Դու արդ կոչես դըժգոյն զոգիս
Յաճիւնացեալ մարմնոց 'ի դիս,
Զարթուցանես եւ 'ի շիրմաց
Զ'ի խոր թաղեալ զոսկերատիս.

Դու արդ սանձես ըզԲելիար
Յանլոյծ շըղթայ մըշտախաւար,
Եւ մահացեալ ըզմահ ընկձես
Ընդ քո ոտիւք յաւէժաբար.

Թող քեզ Սաղիմ ըմպահկեսցէ,
Սիրտ մեր ըզքեզ վեհ դաւանէ
Քան զոր տիտղոս խաչափայտիդ
Վերտառութեամբն արձանակէ.

Նա եւ այժմիկ երբ մեղմովին
Թօշնիս հեւաս ըզշունչ յետին,
Խոստովանիմք ըզքեզ անմահ
Աստուած եւ Տէր ամենայնին.

Նա եւ այժմիկ երբ կաս կախեալ
Դու ոգեսպառ յարեանց քամեալ,
Մ՚եք տըխրագին քեզ նըւիրեմք
Եւ զարտասուս եւ զուխտ սըփռեալ.

Եկեսցէ օր, յորժամ արքայք
'Ի քո ճակատ կապեսցեն թագ,
Եւ առ բազկօք քով կախեսցեն
Զարժանաւոր ըզպատարագ.

Եւ առ խաչին պատուանդանօք
Գետնատարած կըրկնեալ ծընկօք
Հեղցեն զանձինս և զգաւազան
Ընդ քո ծակոտ գարշապարօք.

Կապիտոլեան տեսցէ, ափշեալ,
Զիւր Արամազդ բացամերժեալ,
Եւ քեզ միայն, որում արժան,
Բազմաբուրեան կընդրուկս ածեալ. գ

Քո խաչափայտ, և սուրբ մարմին
Պատառոտեալ 'ի պատկերին,
Եւ սիրտ կաթոտ՝ զոր խորահերձ
Սէրըն ճեղքեաց 'ի ծայր տիգին,

Եւ տատասկաց բոլորք դաժան,
Եւ դէմք ծըրդեալք 'ի չիթ արեան
Լիցին ըստէպ որոց զըննեն
Պատճառք ցաւոց, քեզ բերկրութեան.

Եւ առ տեսիլ քոյ բևեռաց,
Զխարդ որչափ ձայնք հեծութեանց.
Սոքա բազմաց բազում անգամ
Ներգործեսցեն ըսպիս վիրաց.

Երկիր անուանս, որ կախեալն է
Ի զբարձրածայր քառաթեւէ ,
Պագանէ արդ երկին պաշտմամբ ,
Նա և աշխարհ յետոյ պագցէ .

Յայս սուրբ անուն սարսափեցեն
Ի զուր Կեսարք մռընչեցեն ,
Սանդարամետք համագումար
Խոր յանդընդոց կաղկանձեցեն .

Քանի՛ քեզ փառք և որպիսի՛
Ի յժմու ամօթ յայնժամ լիցի ,
Եւ որպիսի՛ քեզ յաղթանակ
Ում հանդուրժես ծանակ արդի .

## ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

---

ԱՌ ԿՈՅՍ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՈՐ ԿԱՅՐ

ԱՌ ԽԱՉԻՆ

*Ընդէ՞ր զՈրդւոյդ , Մա՛յր ողբական ,*
*Ներկնեալ բարդես ցաւ անվախճան .*
*Մ՛ի միայն խաչ առ 'ի տանջել*
*Մ՛ի թէ նըմին չէ՞ր բաւական ։*

*Խաչ է երկրորդ քո Միածնին*
*Օ՛ր տեսանէ զմայր ցաւագին .*
*Սա վիշտս ունի ոչ դուզնաքեայ ,*
*Գուցէ բազմօք և սաստկագին ։*

*Տեսանես դու արեան կաթուած*
*'Ի ճակատուն բազմահարուած ,*
*Ընդ լի՛ճ լուսոյն գընալ թորել ,*
*Եւ ընդ տեսիլ այտից դիմաց .*

Տեսանես դու արեան վտակ
Յոտից ձեռաց բղխեալ արձակ,
Եւ ըզզօղուած ոսկերոտւոյն
Որ 'ի ջրղաց քակտեալ համակ։

Այսպէս ըզքոյդ որդեակ զննել
Կոչես Մայր դու, քեզ դիւր լինել.
Ա՞յդ քեզ հաճոյ, և մի՛ թէ զուգ
Ագէ՞տ տեսլեանդ ունի մեղմել։

Չես բաւական, որպէս կամիս,
Բանըս յօդել ըսփոփելիս.
Յաւն 'ի բերան ըղբան գելու,
Որ բարբառելըն յօժարիս.

Ոչ 'ի քըղանց ոչ 'ի մաքման
Ջընջել զարիւն իւր սըրբազան.
Խաչ բարձրածայր ըզնա ունի
'Ի քոյ ձեռաց յոյժ բացական։

Եւ ոչ յորժամ մահ դըժպըհի
Զնորայն կընքէ վիշտ ցաւալի,
Զաչըս նորա ըզկըկոցեալ
Չեռք կափուցեն քո մայրենի.

Խնայեա՛ հայցեմ գոնեայ յորդիդ
Թէ ոչ գիտես խնայել սըրտիդ.
Տուրի նա աղէխորով
Բոյդ արտասուօք ուր 'ի յայտիդ։

Ոչ քեզ դիւրեչ և ոչ նըմին
Զունիս լինել մօտ առ խաչին .
Դու 'ի նորայն և նա 'ի քոյն
Մորմոքեսջիք սուգ ցաւագին ։

Զոր ինչ կրեցեր , Բանդ հայրական ,
Թէ ոչ գիտէր կըրեալ քեզ զայն ,
Յուրաստ լինէր իբր յանհնարից
Խժդըժութիւն նոյն իսկ դաժան ։

Ըզքեզ կոչեմ ինձ 'ի վըկայ
Նու ըզորդիդ առհաւատչեայ ,
Խոցուածք ծնողիդ քան թէ Որդւոյդ
Այրեն ըզքեզ դառն և դըժնեայ ։

Նա և ըզսոյն , Մայր բազմասուգ ,
Զանգիտանաս , գիտես յատուկ .
Իւրաքանչիւր տանջանք նորա
Են մեղմագոյն քան ըզքո սուգ ։

Կըսկիծ նորա , նոյն և քոյին
Մասամբ իւիք փոքր 'ի շատին
Դնասցէ ընդ քեզ , թէ յանձն առցես
Դընալ և դու յաչաց նորին ։

Պատմեսցեն այլք քեզ 'ի վերջէ ,
Ո՛ր բանք յետինք մի 'ստ միջէ ,
Զո՛ր պաղատանս և վասն որոց
Պաղեալ շըրթամբք նա մատուսցէ ։

Զի՞նչ ինչ արբցէ 'ի ծարաւին,
Զի՞նչ հօր աղերս կերկերագին,
Ո՞րպէս և Սօրդ անյիշատակ
Ու եղիցի 'ի ժամ յետին։

Ե՛րբ ամփոփէ զաչսն վատեալ,
'Ի խիստ փայտի զկեանսն կընքեալ.
Ո՛րպէս զխաչեալ կողըն նորա
Հերձցէ նիզակ 'ի խոր մխեալ.

Զայս ամենայն այլք պատմեսցեն.
Իսկ դու դալկաւ հարեալ անդէն
'Ի մայրենիդ կրեսցես 'ի սիրտ,
Զոր նա կրեաց մարմնով յաղդէն.

Զի՞նչ արասցես 'ի հանդիպէ,
Թէ զոր լուես դու 'ի բացէ
Խոցք կարեվէրք լիցին 'ի սիրտ
Իւրաքանչիւրք 'ի նոցանէ։

Նշղո՛ւկ զինև. անխախուտ կայ,
Ընդ առ ետեղ արձանանայ,
Նու զարիւնոտ ըղձուն խաչին
Ցանգ արտասուօք իւր լուանայ.

Նա զի ըղդէմն արտօսրագին
Դարձուցանէ յեթեր վերին,
Նա զի պըշնու ակընկառոյց
Ըղեխորով յիւր Սիածին.

Ո՛վ աղետիս, զի՞նչ գործեցէ.
Կացցէ՞ անդէն, ցաւն արգելէ.
Տեղի՞ տացէ, այլ բռնագոյն
Սէրն առ խաչին ըղձա կապէ.

Ա՞յս քո օրէն, Սէ՛ր դառնացող,
Այսպէս յոգես սիրտըս սիրող.
Արքայութեան քո խրատունք
Ի՞բր անողոք, ե՞բր աններող.

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

'Ի ԾԱՌԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
'Ի ՄԱՀՈՒԱՆ, ԵՒ 'Ի ԹՈՂԱՆԱԼՆ
ՑԵՐԿՆԱՒՈՐ ՀՕՐԷՆ

*Արդ ամենայն ինչ պակասի*
*Ում զամենայն 'ի բուռն ունի.*
*Եւ խընդրողին յիւրըն ծարաւ*
*Պակասի ումպ ցուրտ բաժակի.*

*Զոգիս նորա քաղեալ էին*
*Բիրտն և վաստակ արիւն վերջին,*
*Եւ ցայգն ողջոյն հըսկեալ անքուն*
*Յանչափ կըտտանս 'ի դառնագին.*

*Եւ բազմաքայլ ուղին դաժան,*
*Եւ ծանրակիր փայտին հեծան*
*Յուսըն բարձեալ յարիւնաբուխ,*
*Եւ օրինակ անպուլթ մահուան.*

Ջո՛ւր մատուցէք արագ արագ,
Պիւր է պաղքոյն ջրոյն կայլակ,
Զոր հազիւ հազ հեղաբանէ
Արցեալ 'ի քիմս լեզուն ցամաք.

Ո՛վ վայրենի գազանութիւն,
Զլանան և ջուր տալ մեռելոյն.
Մատուցանեն յումպ ըզբաժակ
Ըզփրփրադէզ 'ի գաւըն թոյն.

Բայց և այնպէս զայն ճաշակէ.
Այս գառնութիւնն, որ յայնմանէ,
Զորկոր ըզքիմս և ըզլեզուն
Բան ըզծարաւ կիզեալ այրէ.

Ո՛հ, միսանգամ, գէթ աղբերաց;
Աղջիք 'ի կորդ առապարաց.
Ըզճանապարհ ձեզ հորդեսցեն
Մէնք խորտակեալք առ 'ի վըշտաց.

Որ առոգէ զանջուր բանջար
'Ի ցօղ յանձրև լիապատար,
Որ սահանօք գարնանային
Զըւարթ առնէ զգօս արտավար,

Որ 'ի յականց կոչէ զաղբիւր,
Այս յաղբերաց վըտակըս բիւր,
Արդ թալկացեալ հասոիչ նոցա
Ձեզ կարօտի 'ի նըպաստ իւր.

Զի՞նչ աստանօր բարբառեցայց.
Չի՛ք ինչ գանգատ ըղձեւեալ,
Եւ ոչ ըղխաչէն ամենեւին.
Լոկ ըզդըժնեայ ծարաւ գուժեաց։

Նա որ ամէն վըշտաց տարաւ
Այնչափ երկար լըռէկ 'ի վրաւ,
Հաւատամ ինձ, ոչ լոկ ջըրոյ
Նա պապակեալ ունի ծարաւ։

Զոր ինչ խընդրէ նա սփոփութիւն,
Փափքեալ յայնչափ վըշտակրութիւն,
'Ի մէնջ խընդրէ, ոչ յաղեբրաց
Զանձկալին զայն ըսփոփութիւն։

Նըզո՜ւկ եմ ես. ոչ ինչ աղդին
Նա և 'ի մեզ գանգատք վերջին.
Նու մեք անգութք մատըռուակեմք
Դառնաթորմի բաժակ նըմին։

Բայց ակն ունիմ թէ 'ի յերկնէ
Դիւր և օձան նըմին հասցէ.
Ունկըն դիցեն նըմա երկինք,
Եւ ոչ 'ի դերեւ խընդիրն ելցէ։

Բա՜րէ. եթէրն այն իրազգաց,
Լինի միայն խաւարազգեաց.
Սըգայ ըզՏէր, ողբայ զՀաստիչ,
Բայց յօգնելոյ լինի 'ի բաց։

Գոնեայ ըզքեզ շարժեսցէն, Հայր,
Վերջին թառաչք որդւոյդ արդար.
Հայցէ 'ի քէն ձեռնտուութիւն
Օրհասական ձայն հոգեվար.

Հայրս, զհայրդ շարժմամբ յետին
Աստ անդ ածէ զաչս իւր ոսին.
Եւ հազիւ հազ թոյլ պարանոց
'Ի վեր ունի ըզգլուխ նորին.

Թէ և քաղին նիազ ոգիք
Արեամբն հանդերձ վտարանդիք,
Եւ լըքանեն զմարմին թափուր
Ոյժք առ ցաւոց վայրավատինք,

Բայց և այնպէս զայլագունեալ
Տեսիլ դիմաց վերամբարձեալ,
Որպէս զհայրդ հընար նըմին՝
Աչօք հըրթամբք ըզՀայր խնդրեալ.

Եւ հառաչեալ խորոց սըրտէ
Հեկեկանօք աղաղակէ.
" Եւ դու թողուս և լըքանես,
Հայր սիրելի, զիս 'ի բացէ. "

Բանք որ ըստէպ զՀայր շարժեցին,
Արդ ոչ շարժեն, թէ և յետին.
Գոգցես ըզՀայր գորովագութ
Թողեալ լըքեալ զիւր Միածին.

Հա՛յր բարեգութ, և ոչ իսկ դու
Յորդիդ գըթաս 'ի մահացու,
Նա ո՞չ այն գութ հայրագորով
Ընդ յիշատակ մըտաց թողու։

Նա ո՞չ չարժէ ըղքեղ հասակ
Մաշեալ 'ի ցաւ մըշտատևակ.
Նա ո՞չ նոյն իսկ մահըն չարժէ
Առիթ մահուն, սէրըն միակ։

Պարտ է և այսմ հարկ է ժուժալ,
Փըրկիչդ Յիսուս ամայացեալ,
Ո՛վ Հայր քո քաղցր յամենեսին,
Ոյժ ունիցի քեզ խոստանալ։

## ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՅԵՏ ՈՐԴԻՈՅՆ ՄԵՌԱՆԵԼՈՅ 'Ի ԽԱՉԻՆ

Մեռաւ ահա, և խոնարհի
Կոր պարանոց զլանջօք սըրտի.
Մեռաւ ահա, և ըզխաչէն
Կախի 'ի վայր բեռն անհոգի.

Օ՜ ի՞նչ արդ խորհուրդք, զի՞նչ դառնութիւն
Յաղէտ սըրտից, Մա՛յր թաղծագոյն.
Օ՜ խո՛րդ այս մահ ոչ նոյնաբար
Բղրոյդ բառնայ կենդանութիւն.

Ո՜վ աղէտիս. եբարձ եբարձ
Դա առաւել քան զշունչ կենաց,
Յորժամ ըզնա, որ էր միակ
Ի՛նձ յոյս համայն և կեանք, եբարձ.

Ո՛հ, երկաթի աղխք նորա,
Եւ քեզ սոսխ վայրագ դըժնեայ,
Որ միանգամ այսըմ սըգոյ
Գըտաւ պատճառ քեզ անխընայ.

Զինչ բարբառիմ. ես ինքն եմ այն,
Ոչ զայլ խընդրեմ, յանձին ըզգամ.
Զինէն լինիս, ով Տիրածին,
Լըռիկ գիտօք դու ամբաստան.

Ոչ ինչ են պէտք բանից լեզուին,
Աչք եւ արտօսր հերիք խօսին.
Զայս արտասուաց լըւաք բարբառ,
Ծանեաք զիմաստ որ 'ի նոսին.

Ո՛հ, ցաւագին Մայր անապակ,
Խոստովանիմ ինձէն գիտակ.
Կըսկիծք քո այդ՝ յանցանք են իմ,
Դոքա գործոց իմ յիշատակ.

Ես ինքն եմ ես, այն վնասակար,
Վէրքըդ՝ զոր լաս՝ իմ է արար.
Այլ եւ յոճիր ըսպանութեան
Ձեռք իմ շաղեալք յարիւնն արդար.

Յայս ընկըղմեաց վըշտակրութիւն
Զորդիդ եւ զքեզ իմ շամբշութիւն.
Միտք իմ ցընդլին ամօթապարտ
Ընդ գործեցեալն եղեռնութիւն.

Տակաւ է աստ ցօղ արտասուաց .
Եւ ոչ արիւն իմ երակաց
Թէ քամեսցի ըսպառըսպուռ
Մինչ 'ի յետին շիթ կայլակաց,

Եւ ոչ վաղերք թէ սկիւթականք
Զիս յօշոտէն յախերականք,
Կամ ձիախըրոխտ թէ դէմ ընդդէմ
Ճեղքեալք հերձցին մարմնոյս անդամք,

Եւ ոչ 'ի սաստ սիկիլեացի
Դատապարտեալ Բըռնաւորի
Թէ տապակիմ 'ի փոր Ցըլուդ
Որ Պերիղղէ պըղընձաղի, 3

Եւ ոչ եթէ երկինք բոլոր
Դըժնեացին յիս պատժաւոր,
Լիցի երբեք պատիժ հանգէտ,
Չարեաց իմոց արժանաւոր.

Իս եղկելիս զի՞ գործեցից,
Զիմ առագաստ յո՞ դարձուցից.
Եւ ո՞ ինձ յոյս, ո՞ ապաւէն,
Նաւահանգիստ ու՞ր ես գըտից.

Առ վէրըս քո, Որդիդ Աստուած
Դառնամ լալեօք աղերսահայց.
Դորա միայն հըզօրք քաւել
Զիմ ահագին զոճիր չարեաց.

Դոքա լիցին յոյս ներութեան,
Դոքա, հայցեմ, յոյս գըթութեան.
Կամ այդոքիւք, կամ ոչ իւիք
Գըտից նըպաստ ինձ օգնութեան.

Դաժանութեանն իմ յիշելք
Ի՛նձ գըթութեան լիցին գործիք.
Եւ օգտեսցե՛ն ինձ այն խոցուածք,
Զոր գործեցին իմըս դատիք.

Այսպէս անշուշտ. Որում սատար
Ինքնին եղէ թըշուառաբար,
Այս մահ միայն՝ իմ յոյս միակ՝
Ընդ իս ընդ քեզ գոլ հաշտարար.

Ասեմ ասեմ, թէ և լսել
Սարսուռ ածէ և սարսափել.
Նոյն իսկ ոճիրք աստուածասպանք
Աջակցեցին մեզ սատարել.

Ո՛ հաւատայր, խորհո՛ւրդ խորին.
Մեղուցելոյն մեղք օգտեցին.
Դառըն պըտուղք մեղաց մերոց
Են փըրկութիւն մերոյ ազգին.

Որոց պատժոց արժան գըտայ,
Զայն ինքն Աստուած արեամբ իւր տայ.
Յոր ժանտացայ թըշնամանօք,
Մահապարտիլ վասն իմ ժուժայ.

Ի՞բր իրաւամբք ոչ պատժեցայց,
’Ի բոց անշէջ ոչ այրեցայց
Թէ անսահման սէր այսպիսի
Ու ըզսըրտիս փըշրէ հաստուած.

## ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

---

ԱՌ ՄԱՅՐՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ ԳՐԿԱԲԱՐՁ ՈՒՆԻ ԶԱՆՇՆՉԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ ՄԻԱԾՆԻՆ

Ըզքեզ տեսից, Մայրըդ ցաւած,
(Եւ ո՞չ 'ի սիրտ աղէտացայց,)
Գիրկըս արկեալ ըզՄիածնիդ
Խոց անդամովք արեամբ ներկած,

Զամեն լալոյդ ես հայեցիմ
Մօտակ բըղխել զայտիւք նորին,
Եւ արգելըց զիմ արտասուաց
Ըզչափաւոր չիթ դառնագին։

Ըհա ընդ քեզ բնութիւն էից
Իւր արարչին հառաչակից
Եւ վըշտագնեալ սըգայ ըզմահ,
Որով և դուն յոքնաթախիծ։

Զի մի արև տեսող լինի
Զոճիր մահուս աղետալի,
Զերեսս 'ի բաց դարձուցանէ,
Զաչորն քօղէ ըղտըխրալի.

Հող ընդ ոտիւք արդ մըռընչէ
Իւր կարծրութիւն վիմաց ճայթէ.
Աղետալուր բոմբիւն գուման
Յաստեղաց լուր վէր ելանէ.

Իւր որդաւոր դասք ուրուականք
Աստ անդ յածին թափառականք.
Ժամանեն ցաւք և ընդ շիրմօք
'Ի ցուրտ աճիւն յոսկեր կուտակ.

Ոչ որք ըննաւ 'ի տեսողաց,
Ոչ որք ըննաւ և 'ի դահճաց
Անթաց աչօք դառնալ 'ի տուն
'Ի մահուանէ սաստի զօրեաց.

Նովին ձեռամբ որով վայրագ
Շարժեաց 'ի դան զանգուլթ մըտրակ,
Որով խրթեաց՝ որով խոցեաց,
Նովիմ բախէ զկըրծից տախտակ.

Բազում և այնք 'ի խուժանին
Որով շըրթամբք հայհոյեցին,
Նովին հեծեն նովին լուտան
Զիւրեանց ցասման թափ դիւագին.

Եւ մինչ այսպէս ամենեքեան
'Ի սուգ մըտեալ հեծեն ողբան,
Ի՞մ միայնոյ սալանայ սիրտ
Քան ընդհերձեալ ժայռ անսասան.

Ե՞ս միայնակ եղէց ժուժկալ
Յաղէտ մահուդ անշարժ մընալ,
Եւ ակնարկել զերես քոյին
Արտեւանամբք երաշտացեալ.

Այս խըստութիւն ինձ դէպ ոչ է,
Տիպ լացողիդ զիս խոցեսցէ.
Եւ որպէս արդ խոցէ ըզնոյն,
Հայցեմ 'ի քէն, միշտ խոցեսցէ.

Եթէ 'ի վերս Որդւոյդ հայիս,
Եւ նոյնքանեօք 'ի սիրտ խոցիս,
Տո՛ւր զի նոքին և յեղկելւոյս
Յիմ տարրացելն 'ի խոր սըրտիս.

Եթէ համբոյր մատուցանես
Եւ արիւնեն տատասկք զերես,
Արսկիծ քո այդ տոչորեսցէ
Եւ մաշեսցէ զիս դառնապէս.

Տեգ որ զորդւոյդ ըզսիրտ եբաց
Եթէ ընդ քոյդ մըխի Թափանց,
Նա և ընդ իմ սիրտ երկաթի
Մըտցէ ելցէ նոյն Թափանցանց.

Եթէ դահճաց դէմք դիւակիր
Դեռ քոյ աչաց են արհաւիր ,
Ըստմընեցայց ես 'ի նոսա ,
Նըզովեցից զանձին զօձիր ։

Եւ թէ յորոց և աղբերաց
Զարթնուն 'ի քեզ ցաւք տըրտմագնեաց ,
Նոքիմբք և իմ զօրհանապազ
Բորբոքեսցին ցաւք անձկայրեաց ։

Եղէ պատճառ ցաւոց քոյին ,
Եղէց նաև կըցորդ նոցին ·
Որով ըղձոյդ կըցորդութեամբ
Սուգ մեղմեցից , Կոյս ցաւագին ։

Իցէ՞ արժան ինձ մոռանալ
Երբ առ խաչին կայիր դեղնեալ ,
Թէ զինչ որդւոյդ քո Միածնի
Եղեն վերջին բանք ասացեալ ։

Երբ 'ի յետին շունչ հասանէր ,
Նա լու 'ի լու ինձ բարբառէր ,
Որ ինձ մայրն էր , արդ քո լիցի ,
Ըզմօր մերոյ պահեա՛ ըզսէր ։

Ըստի անձեաց սէր գըթալի ,
Եւ աղաչեմ միշտ անձեցի ,
Որ զիս ունի անտի և այսր ,
Եւ քեզ ողջոյն զինքըն պարտի ։

Ամենայն ցաւք զորըս բերես ,
Ինձ հասարակ լիցին ընդ քեզ ·
Ապա թէ ոչ զանուն որդւոյ
՚Ի զուր է ինձ կըրել այսպէս ։

Նու զի՞նչ արդեօք · Մօրըդ խոցուած
Ո՛չ և որդւոյս լիցի հարուած ·
Օ՛այս , այլանդակ եղեռնութիւն
Ատեայ նոյն իսկ բարք վայրենեաց ։

Ոչ շատանամ թէ ձայնակից
Լռում հեծութեան զանձն իմ եղից ·
՚Ի ցաւել քո , սիրելի՛դ Մայր ,
Մեռցի անձն իմ , այս ուխտ ըղձից ։

Տա՛յր ոք արդեօք ինձ վիճակել
՚Ի նոյն ՚ի սուգ հաշել մաշել ·
Ն՛ւր երանի , թէ զայս լիցի
Իմոյ մահուն պատճառ ասել ։

# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

## ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

---

### ՊԱՐՏ Է ԱՆՄՈՌԱՑ ՈՒՆԵԼ ԶԾԻՐԱՏԱԿ ՎԻՐԱՑ ՔՐԻՍՏՈՍԻ

Դու, որ ըղձնուս ՚ի խաչելոյն
Պատկեր ցաւոց աղետագոյն,
Զինչ և որքան վէրըս տարաւ
Աստուածորդին առ քո սիրոյն,

Ոչ այնքան վէրս որքան եդին
՚Ի ցաւատեալ տեսցես մարմնին.
Ոչ ինչ արհեստք ըղձիւ գունովք
Նըկարագրել կարողացին.

Սակայն ըղձիրտ յափըշտակեն,
Զանընկառոյցն ՚ի սպառ ձըգեն.
Որոց անձնիւր յանձնիւր տեղիս
Գեղեցկագիր միշտ շողշողեն.

Տես թէ զիա՛րդ լայնապատառ
Կող իւր և սիրտ բաց են 'ի սպառ.
Զիա՛րդ իցեն ձեռաց ոտից
Խոցուածք վիրաց, զոր նայն էառ։

Դոքա չունին ըսպիանալ,
Կացցեն մնասցեն անկից բացեալ,
Յորչափ մընայ որ առ զնոսին
Մեր աղագաւ մահ ճաշակեալ։

Պահէ զնոսին նա յաղթական
Իւր յաղթութեանն անջինջ արձան,
Եւ նըշանակ ախորժելի
Ըստրըկութեանդ ազատութեան։

Զայդ խոց վիրաց ներգործեցին
Ոչ թէ բևեռք, ոչ սայր տիգին,
Ոչ ամբոխին և ոչ դահճաց
Կատաղութիւնք դըժոխային.

Այլ Մերն յաւէտ, որ այսքանեաց
Նախապատճառ անբաւ վըշտաց,
Եւ այսքանեաց վիրաց տանել
Ըզմեզն Աստուած բըռնադատեաց։

Հատո՛ զարժանն ըղձաւասար.
Գուցէ խընդրես, եւ այն վըճար.
Կամ զինչ կամի նա որ ցանկայ
Զիւր երախտեաց կըշիռ արդար։

Ոչ պահանջէ քեզ յանձն առնուլ,
Ոտից ձեռաց գամովք հերձուլ.
Ոչ ծայրասուր 'ի տատասկաց
Անարից գլխոյդ ծակ ծակ ցելուլ.

Ոչ զի վարչաց հարուածք ազդոյ
Ցաւատեսցեն զանդամըս քոյ,
Նաւ ոչ զի տէգ շըռընչաձայն
Անցցէ թափանց ընդ կողըս քոյ.

Միայն վերաց զիւր յիշատակ
Պահել 'ի քեզ ունի փափաք.
Օ՜ ինչ արդ դիւրին քան թէ յիշել,
Օ՜ ինչ այլ ախորժ դոյզըն վաստակ.

Ա՛յս շատ նըմա, թէ 'ի մըտի
Տանիս անդուլ զհարուած վէրի,
Օ՜ որ վասըն քո նա հարուածեալ
Տարաւ անմեղ յիւրում մարմնի.

# ՆՎԱԳԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՎԵՀՏԱՍԱՆԵՐՈՐԴ

---

### ԵՒ ՄԵՔ ՊԱՏՃԱՌՍ ՏՈՒԱՔ ՑԱՒՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Այս ՚ի ձեռս իմ ճարտար նըկար
Խաչափայտին արիւնայար,
Յորում կախի Աստուածորդին
Վիրաւորեալ դառնաչարչար.

Սա արծարծէ յոլովակի
Ըզհուր նիրհեալ զիմոյ սըրտի.
Եւ զի բըխէ յաչաց իմոց
Ըզցամաքեալ արտօսր աղի.

Այժմ իսկ յառեալ ՚ի սոյն աչօք
Նոյն և բոլոր ուշիւ մըտօք,
Ըզկատաղի ժողովըրդեան
Քըննէի գործ զարմանալեօք.

Զըննէի ես զոտից ձեռաց
Հաստահեղյս լայն պատառուած .
Եւ զի յողջոյն նորա մարմնի ,
Էր մի միայն վէր և խոցուած .

„ Ո՛վ դըժընդակ գործ դիւագին ,
Առձայնեցի ես զայրագին .
Ըզքեզ , Բարձրեալդ և բարերար ,
Ձեռք ազգակիցք այսպէս հարին .

Բայց քեզ ո՛վ , ազգ աստուածասպան ,
Փոխան ընդ այս եղեռնութեան
Ածցէ կորուստ զարժանաւոր ,
Վըրէժ արդար սըրտմըտութեան .

Ըզձեր ժանիս սովըն դըժնէ
Մխմեանց 'ի միս յեսանեսցէ .
Կերիցէ մայր զաղիս անձին
Զոր նայն երկնեաց յիւր արգանդէ .

Տապաստ անկցիս 'ի սայր սըրոյ ,
Լըցցի տաճար ճապաղեօք քոյ .
Դու և ոսոխ ընդ քո հարուած
Հեղջիք յաչաց աղբիւր լալոյ .

Եւ խաղաղացէ յաղթող վիրագ
Դաշնանալ քոյդ յաւերակ .
Քանդեսցէ նա , ցորչափ մընայ
Քար առ քարի կից և անքակ .

Այլ անագան այս ամենայն.
Երկիրդ այժմէն բաց ըզբերան,
Այժմէն հայցեմ. չէ շատ սարսել
Առ այսպիսի ոճիր դաժան:"

Երբ զայսոսիկ և աւելի
Հեծմամբ ցասմամբ պատրաստէի,
Եւ ասէի, գնամ ուրանօր
Արդար զայրոյթ վարէ զոգի,

Ընդէն և անդ ինձ թըւեցաւ
Որպէս թէ օդ ըշկահեցաւ,
Զոր օրինակ թըռչունքն առնեն
Երբ զամպ հերձուն թեթև մագլաւ.

Կայր Սէր յոտին, բայց ոչ պատեալ
Սովորական զինուք վառեալ,
Եոչ մանկական գեղեցկութիւն
Ընդելական, յայնըմ ցուցեալ.

Ոչ ըղթիկանց կապարճք կախին,
Եւ ոչ աղեղն ոսկի փըքին,
Եւ ոչ նորա աջ արծարծեալ
Ըզջահըն վառ 'ի մէջ օդին:

Այլ չէն ունի նա ըզնիզակ,
Այլ չէն ունի զըժնեայ մըտրակ,
Բեւեռս անգութ և ծայրասուր,
Խայթոցաւոր փըշոց տըրցակ.

Ոչ պակասեն և խիստ պարանք,
Ոչ պըղընձի սարեաց կապանք,
Եւ ոչ իսկ խաչ դըժոխակիր,
Զորս էր ներկեալ արեան հոսանք։

Զխորդ տեսեալ յապուշ հարայ
Եւ հիացեալ ընդ դէմ դըժնեայ,
Ընդ այս աչեղ և ընդ գործիս
Այսպէս խօսել յարձակեցայ.

„Մա՛նկիկ քաղցրիկ, զի՞ կայ և քո
Դ. այդչափ անգութ զէն կազմածոյ.
Ընդէ՞ր փափկիկ ձեռօք բառնաս
Կազմած զինուց, որք ոչ են քո։

Սըլաք նետից քոց մահական
Զոր արձակես յորդիս մարդկան,
Կիզուն լափեն դըժնեայ բոցով,
Բայց և այնպէս մարդիկ չառեան։

Այդ զէնք վայելք վայրագ Ռուսեանց
Սարմատացւոց, ժանտ Պեղոնեանց, կ
Եւ որ նըման գազանամիտ
Արիւնախանձ բարբարոսաց։”

Այսպէս առ նա գանգատ կալայ.
Այլ նա խոկոյն դիմօք դըժնեայ,
„Որո՞ց, ասէ, յանցուցելոց
Քո բարկութիւն անէծ կարդայ։

Զի՛ ըզՍաղիմ ամբաստանես,
Պատըն քանիւք երգիծանես,
Չև կանխագոյն իրազեկ լեալ,
Ո՛չ յայդ ոճիր յանդուգն այդպէս։

Այնըր մահուան աղետալի,
Յորմէ դողաց երկիր ւարփի,
Ես ինքն եղէ ես գործօնեայ,
Ես ինքն եղէ պատճառ նախնի։

Բայց ոչ զըղջամ ես պարտաւոր,
Այլ և պարծիմ ընդ գործըս նոր,
Աստի պարծանք աստի շուք մեծ,
Չըքնաղ գործոցս իմ հրաշաւոր։

Զինչ առանց իմ կարող էին
Ոխ և զայրոյթ դահճաց գընդին,
Եւ առանց իմ ո՞ր գեղարդունք
Խոցել զԱստուած կարող էին։

Ես ինքն ինձէն նըմին ետու
Մարմին վըշտաց և մահացու,
Նոյն և զանդամ գողտր և փափուկ
Ընդունական զանից մահու։

Յերակ նորա ես ինքն հեղի
Աւիշ արեան զի թափեսցի.
Յինէն ունին և տիեզերք,
Զի կեղտ մեղաց իւր լուասցի։

Վասն այն բարձի զանձամբ և յաջ
փուշ արիւնոտ հեղոյս և խաչ.
փոխան իմոց նետից ձօձէ
Գեղարդն ահեղ բազմաշառաչ.

Բայց գոյ 'ի քեզ միտք անսասան
Յոյս 'ի զինուց անյաղթական.
Ունիս դու սիրտ, ուժ ոչ զօրէ
Յաղթանակել Սէրն յաղթական.

Խորտակեցի զախ տապանաց,
Լաւ հարկեցի զոգիս չիրմաց,
Եւ կակղեցան իմով բոցով
Զոյլք կարծրակուռ ժայռից վիմաց.

Եւ քեզ միայն ոյժք պակասին.
Գոյ մեծագոյն ըզգայութիւն
'Ի նոյն իսկ ժայռ կարծրատեսակ,
Նոյն իսկ յաճիւն գերեզմանին.

Ոտնակառեալ ըզկայ առնու
Իմ յաղթութիւն երբ վազս առնու.
Յարկանել քո իմ ընթացից
Դըժուարահուն խոչ ոտնառու.

Հիմ արդ զամբոխ բամբասէիր
Դու քան ըզնա անկարէկիր.
Ըզմեղուցեալ ոչ բարիոք
Յանդիմանէ այր մեղսակիր.

Եւ դու այսմիկ կատաղութեան ,
Ոչ սուղ եւ դու հաղորդ յանցման ,
Եւ դու ունիս մասն և բաժին
Յաղխողորմ այսչափ մահուան ։

՛Նոքա զանդամս արիւնէին
Ի գան 'ի վէր զոր ածէին .
Այլ այն խոցուածք զոր դուն առնես ,
Ի սիրողին սիրտ թափանցին ։

Չարեաց նոցա զեղեւնութիւն
Նազմօք մեղմէ ւանգխտութիւն .
Ոչ էր այնպէս բացածանօթ
Զօրականին Աստուածութիւն ։

Իսկ դու յորժամ անօրինես
Անզխտանալ ոչ ինչ զօրես ,
Եւ ոչ միով պատրըւակաւ
Ըզժանտութիւն քո ծածկեսցես ։

Ո՛չ գխտիցես , քոյին յանցուած
Գրժնեցաւ քան զիմ կազմած .
Եւ թէ այնպէս դըժնեցաւ ,
Արար և զայդ քոյին յանցուած ։

Արդ երթ խաղա գանգատանօք
Զանագորոյն ըըկիչ դահճօք ,
Ասյուշ եղեւ ըղքոյդ վայրագ
Գազանութեանց ունել բողք ։ "

*Այսպէս ասաց, և վերացաւ*
*Սըրտմըտութեամբ զոգցես մեծաւ.*
*Այլ զիմ դիմօք շառագնութիւն*
*Ընդ արտասուս խառըն մածեաւ։*

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԶՔՐԻՍՏՈՍ ՄԵՂԱՒՈՐՔ ԴԱՐՁԵԱԼ

'Ի ԽԱՉ ՀԱՆԵՆ

Ա՞ւ ճըշմարի՞տ լիցէն արդեօք
Թէ՛ նորոգի՛ն ցաւք քո մեղօք ,
Ի՞նչ շատ լիցէ քեզ միանգամ
Ջընջել ըզնոյն արեան գետովք .

Բիւրուք վէրօք տեսար ցետեալ,
Մերկամարմին խայտառակեալ ,
Եւ մեռանել բարձր 'ի ձողին ,
Յոր դողացաւ երկիր սարսեալ.

Բայց և այնպէս ով գըտանի՞
Այնչափ անգութ պըղըծձաղի ,
Որ նորոգել մեղօք իւրովք
Զայսչափ ըզվէրս յանդըգնեսցի .

Եւ մեք ինքնին, ով Միածին,
Եմք 'ի համար 'ի Թիւ նոցին.
Աւա՛ղ անձին, եմ 'ի համար,
Խոստովանիմ ըզմեղս անձին ։

Ե՞ր քօղարկեմ զանձն իմ, աւա՜ղ,
Ոչ ինչ եմ այլ, մեղք և ձիւաղ,
Բեռըն գըժնեայ, որում և հող
Տանել յինքեան ծանրադանդաղ ։

Մեղան աչք իմ, մեղան շըրթունք,
Մեղան և ձեռք, ականջք սահունք,
Մեղան գործիք և ընթացից
Յանձին կորուստ իմ երագունք ։

Եւ ոչ իմ միտք անպարտական,
Այլ յոքնամեղ քան զամենայն.
Աստի ծագէ պատճառըն մեծ
Իմ բազմադէմ եղեռնութեան ։

Որոց պիտէր նա տիկնաբար
Իշխել տիրել վայելչաբար,
Ըզհետ չոքաւ կըրից իւրոց
Աղախնօրէն անարգաբար ։

Եմ յանցաւոր. այս է կարծիք
Իսկըն բնութեան դատին իմոյ.
Եմ յանցաւոր. իմ են ոճիրք,
Իմ են վըճաս, խաչ և մահ քո ։

Ե՞ս ինքն ուրեմն հանդուրժեցի,
Զի քո մարմին դանիւ հերձցի,
Եւ պարապետ նոյին եղէ
Որք ձաղկեցին արիւնալի.

Ե՞ս ինքն ածի ապտակ 'ի քեզ,
Ե՞ս փետեցի գըլխոյդ ըզգէս,
Եւ ժահահոտ թըքով իմով
Շաղախեցի ըզքոյդ երես.

Ե՞ս ինքն 'ի քեզ աքացեհան
Մինչ ընդ փայտիւ կայիր կործան,
Որպէս թէ ոչ շատ ինչ էր քեզ
Բեռն անկրելի փայտին զերան.

Ա՛յդ խաչափայտ, այդ փուշք հիւսած,
Եւ այդ հեղոյք իմ են յանցուած.
Համաձարակ այդ վէրք մարմնոյդ
Իմով եղեն չարեօք մեղաց։

Յո՞ր ոչ դիմէ 'ի սրբութիւն
Մահկանացուացս յիմարութիւն.
Զի՞նչ ինչ մնայ յոր ձեռներէց
Նա ոչ լիցի յեղեռնութիւն։

Երբ Տուղղիա կառավարէր,
Պատմի թէ զհօր դին աղձատէր,
Ինքնին վարեալ զանիւ կառաց
Յերես նորա անցուցանէր.

Ոճիր գործոյն ահաբեկեաց
Ըզկառավար քարշել ըզսանձ.
Այլ նա յահուր անկղխտացաւ,
Յոր կառավար ահիւ սոսկաց։

Դըժնեագոյն ես քան ըզսա
Առ 'ի դիւաց մըտրակեցայ.
Դըստրիկ ըզհայր արար կոխան,
Իսկ ես զԱստուած զեխցս արքայ։

Նա երբ զանխիւ կառաց սայլին
Ոըրսկեաց յարիւն 'ի հայրենին,
Անըմնչացեալ մարմին նորա
Իւր անըղձայ ամենեւին։

Այլ իմ ծըպիրհ ձեռք ժանտացան
'Ի կենդանի մարմին նորայն,
Զինեալ 'ի փուշ և 'ի ձաղկիչ,
Եւ 'ի բեւեռս արիւնահան։

Ես 'ի յԱստուած յոլով անգամ,
Նա 'ի ծընօղ և միանգամ.
Պարտիմք առ հայր մեծ գըթութիւն,
Այլ Աստուածոյն է անպայման։

Ըզնա ոխորտ գահն էր գործեալ,
Զոր յանցանօքն արդէն կալեալ.
Ոչ ինչ նըմա գոյր երկընչել
Թէ զհայր մահուամբ ձըգէր տապալ։

Բաւ ինձ արժան սոսկալ յանձին,
Յարգար ցասմանց անմահ Դիցին.
Զամենայն չար ընդ իւր ձրգէ
Սրտմտութիւն անմահ Դիցին։

Զինչ ունէր հայր տրւեալ դստեր,
Բայց լոկ սպիտակ զանուան ըստուեր,
Եւ զանցաւոր գանձուց ըղձոյս
Զոր չարաչար ընկալեալն էր։

Որ ինձ անչափ մեղուցելոյս
Շնորհեաց կամաւ ըզմեծագոյս,
Եւ անկրշիռ գերագունից
Ըստ բիւրապատկի զըրաւ եւ յոյս։

Վասն այն նախնիր գործոց նորա
Փոքր է քան զիմ չարիս դըժնեայ,
Որչափ հաստուած քան ըզհաստիչ
Ի փոքրագոյն ըստորակայ։

Եղուկ զինեւ. զի՞ է ասլրել,
Հիմ ծընողաց զիս ծընանել.
Ինձ օդք եւ հողմ ընդէ՞ր ետուն
Բղշունչ խուրեանց 'ի վայելել։

Ո՛հ, երանի՛, մեռեալ էր իմ
Մանուկ մատաղ յամըս նախկին.
Կամ առ օրին յորում տուան
Կեանք 'ի յանձնէս բարձեալ էին։

Ո՜հ, երանի՛, քան ըզ մահ մեր
Թէ լոյս արփւոյն անագաներ,
Որ խմոյն չարեաց մըղաց
Եղև նախկին գիտակ ըմնկեր:

Կամ թէ յաւէտ որ զիս երկնեաց
Լինէր յամուլ 'ի յարգանդաց,
Կամ ոչ ուրուք եկեալ 'ի լոյս
Ցիմոց հաւուց նահապետաց:

Եւս ոչ յայնժամ համարէի
'Ի քոյ դահճաց գոլ 'ի սակի
Եւ ոչ արդեօք քոյդ ըսպանման
Հաղորդակից կըշտամբէի:

Ո՜հ. ո՞ տացէ այսմ հանդիպել,
Զայսչափ աղէտ ոչ այլ կըրկնել,
Զխո՞րդ հաւուց և գազանաց
Փափաքեմ արդ գէշ անկանել,

Եւ կամ մածնուլ յարձան վիմին
'Ի կովկասեան առապարին,
Զոր գանեցէ հիւսիս հարաւ
Եւ ցուրտ տարափ ձիւնաբերին:

Ըզքեզ կըրկին ես ցետեցից
'Ի փուշ 'ի քուք անգութ գանից,
Եւ լինիցի՜մ քոյդ ըսպանման
Կըրկին պատճառ հաղորդակից:

Մինչ չև է իմ զեղծեալ անդրէն
Խնդրեմ, ընկլայց, խորք զիս առցեն,
Բացցի երկիր քինաթաքոյց,
Եւ կամ յորձանք զիս թաղեսցեն։

Նախ ՚ի յաձիւն փոխարկեցայց,
՚Ի վրէժխնդիր բոցոյն կիզայց,
Երկնասահան կանխեալ շանթից
Քան ըզգործել իմ յանցանաց։

՚Ի պատկերել միտք իմ սոսկայ,
Քանիցս յիշեմ եթէ մեղայ.
Յանդամ մարմնոյս և ոսկերաց
Դող և սարսուռ գայ ընթանայ։

Ընձամբ զանձն իմ դարշիմ ատեմ,
Ըզմեղս և զիս դատապարտեմ.
Եւ բողոքեմ, թէ ոչ հերիք
Ընդ իս ցասնուլ ես ժամանեմ։

Յիս դարձուցէք, դահիճք վայրագ,
Ըզձեր զայրոյթ ըզձեր դաստակ.
Զոր ինչ կըրէ նա ՚ի յանձին
Իմ են չարիք, իմ են վրիպակ։

Ըսպանութեան ես արժանի,
Մի՛ զդա պըրկէք ՚ի ձող փայտի.
Որ այդպիսեաց չարժանաւոր,
Վասն իմ գործոց հիմ պատժեսցի։

Աւէ զկեանս ուրուք բառնալ արժան,
'Ի յանցողէն բառնալի այն.
Խաչի արժան մեք գործեցաք,
Ոչ ինչ 'ի նմա մահու արժան։

Բևեռապինդ զիս պրրկեսջիք
'Ի յայդ զերան զիս կախեսջիք.
Զարգելում զիս 'ի տանջանաց
Զորս 'ի պատժոց զինև անձիք։

Բազմագունից արժանացայ
Բան զոր ձեր աջ կարողանայ.
Իմ արժանեաց ես ինքն եմ քաջ
Նու դատաւոր, նոյն և վկայ։

Զոր աղաչեմս աղերսալի,
Ո՛վ թէ արդեամբք կատարեսցի.
Նու մի ըղձան ցաւոյս նրշան
Որ կարծեսցէ խօսք ցընդելի։

Զիք յիս նահանջ խոչ յապաղման,
Զենման մերոյ կազմ է սեղան.
Ըսպասէ զոհն աղետալի
Ձեռաց ձերոց անգըթական։

Աւէ ժամ հասցէ յիմ պատուհաս,
Ժրասցին բազուկք, ո՛վ անգութ դաս.
Նիւթ եմք ձերոյ կատաղութեան
Պատկանաւոր արժանահաս։

Մ՛ի իմ չարիք ինձ դիւրագնի ,
Յանցուցելոյս տուք սակ պատժի .
Մահուամբ պիտի քաւել ըղձամահ
Արիւնապարտ յանցաւորի ․

Բայց կամք Փըրկչիդ չեն 'ի սոսին .
Շատ են պատիժք քո յատենին ,
Թէ զիս տեսցես ըստըրջացեալ
Ընդ գործեցեալ մեղըս անձին ․

Յա՛ւ են ոճիրք իմ յանցութեան ,
Եւ ո՛չ կարեմ ասել որքան .
Եւ ոչ զորքանն ասել կամիմ ,
Թէ և ջանամ , չեմ բաւական ․

Որ միանգամ յաստիս առ մեզ
Կարէ ըզցաւ չափել լեզուօք ,
Փոքր է իւր ցաւ , փոքր և պատճառ ,
Եւ նիւթք ումպէտք ըղչընչէնօք ․

Զ՛ի՞նչ պէտք իցեն բանից շըրթանց ,
Բայց են սիրտք մեր հանդիպակաց
Ամենատես աչաց Փըրկչիս ,
Զըննել հայել մանրահայեաց ․

Հայիս քեզէն , զի՞նչ այն սուսեր
Որ զիմ խոցէ սիրտ և զընդէր .
Մահուս պատճառ , հայցեմ 'ի քէն ,
Ինձ եղիցի սոյն այս սուսեր ․

Լիցի ինձ շատ մորմոք սրտիս ,
Մեղմ , փրկիչ , խնայեա՛ դու յիս .
Պատճառ մահուդ այն իսկ եղև ,
Զի կամեցար անխայել յիս ։

Ձեռք զոր պարզեմ քեզ 'ի հայցուած ,
Իյր 'ի սպանդ քո է ներկած ,
Եւ տակաւին ծորէ յիւրմէ
Բոսորաբուղխ արեան կաթուած .

Բայց և այնպէս զայն պարզեմ ես ,
Գիտեմ անշուշտ զի ոչ մերժես .
Ներումն հայցէ ինձ այն արիւն ,
Զոր թաթախեալ ըղնոյն տեսցես ։

ՎԱԽՃԱՆ

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Զաւէրն աստուածային բանաստեղծօրէն ձեւացուցանէ աստուածասէր Քերթողս, անձն և դէմս ընծայեալ նմին. և առ 'ի ցոյց անձառ մարդասիրութեանն զոր հրաշացոյց Աստուած առ մեզ քան զիւր արդարութիւն, գխառնարար զՍէրն 'ի ներքս ածեալ, յաղթական երեւեցուցանէ զայն նմին իսկ ամենազօր Բարձրելոյն: Բարբառ է սա և խղճ աստուածասիրացն կաթոգնելոց, որպիսի է և մերումս Նարեկեան աստուածազդեցիկ քերթողի ըղձաձայնութիւն 'ի հառաչելն առ սիրելին իւր Աստուած. " Որ միշտ յաղթես 'ի գթութենէ, և ոչ Թշնամանիս. պարտիս յողորմութենէ, և ոչ պարտուիս. բռնադատիս 'ի մարդասիրութենէ, և ոչ անգոսնիս. հարկիս 'ի բարութենէ, և ոչ հայհոյիս. սոփորիս 'ի սիրոյ, և ոչ բամբասիս: " Նարէկ. ԾԲ:

2. Կապիտոլիոն մի է յեօթն բլրոց Նախնւոյն Հռովմայ. յորում կայր հոյակապ տաճար Արամազդայ գլխն 'ի պաշտօն հեթանոսութեան:

3. Պերիլլոս աթենացի, էր ճարտար անդրիագործ. որ 'ի հաճել զանգթութիւն Փաղարեայ բռնաւորի Ակրագանդացւոց 'ի Սիկիլիա, ձուլեաց ցուլ պղնձի, յորում արկեալ զմահապարտս, 'ի բորբոքելն հուր ընդ նովաւ, բառաչ ցլու լսելի լինէր 'ի ճչել տանջելոցն:

4. Բեսսեանք, ժողովուրդք էին Թրակիոյ կամ Մեւսիոյ, ազգ գազանամիտ և աւազակաբարոյ բնակեալ առ Եբրոս գետով: Իսկ Գեղոնք ժողովուրդք Եւրոպեանն Սկիւթիոյ, վայրագք և գազանաբարոյք, որք զանձամբ արկանէին զմորթ գլխոց Թշնամեացն, և զերծեալք զմորթ լրանւոց նոցա:

5. Տուղղիա, դուստր էր Սերվիոսի Տուղղիոսի, կին Տարկուինոսի գոռոզի վերջնոյ արքայի Հռովմայ, որ զերիվարս կառացն անցոյց անգթութեամբ 'ի վերայ դիական հօր իւրոյ անկելոյ զճանապարհայն:

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

1830

ՅՈՒԼԻՍԻ 11